



ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ ԱՄԵՆՈՒՆ ԲԱՄԱՐ
 "PAPÈRE"
 REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
 ORGANE DES ÉGLISES ÉVANGÉLIQUES ARMÉNIENNES DE FRANCE

Rédaction et Administration :
 7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԲ ՏԱՐԻ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 1936 12^{me} Année - Octobre 1936

Խմբագրական

Ճրանսական բարեկարգեալ եկեղեցիներու միութեան հարցը

Զ. Բ. Պ.

Հոգ. կեանք

Շնորհակալութեան շնորհքը

Աղօթք

Ասիայի եօթը եկեղեցիները

Սամուէլ Պ.

Վեր. Ա. Օ. Փափազեան

Կենաց ածուներէն

Թուրքիայի մասին

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Վ. Ս.

Կենսագրական

Ճան Ուէսլի

Պատանեաց

Փրկութիւն Յիսուսի արիւնով

Միշտ յաղթական

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծառայը կը զգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Բրիտոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի ճշմարիտ Վանքին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Բրիտոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը երկու լիզուներով կը հրատարակուի Հայերէն եւ թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտիի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն ռուս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որոն ղրկուելու են նաեւ բոլոր թուրքերէն յօդուածները:
ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Բրիտոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք ԵՒ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՐԵՐ 1936

ԹԻԻ 10



ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Գ.

Հարցը հետզհետէ յուզուելով, դուրս ելաւ
երկու եկեղեցիներու շրջանակէն եւ հասաւ այլ
կազմակերպութիւններու:

Ե. Բ. Ե. իր Saintes քաղաքի եւ Ե. Բ. իր Ne-
versի Միութեան ժողովներուն ընթացքին փա-
փաք յայտնեցին որ ուրիշ եկեղեցիներու ալ
դիմուի եւ խնդրուի որ անոնք ալ մասնակցին
Միացման խորհրդածութիւններուն: Այս դի-
մումները յաջող ելք ունեցան:

Նոր ազդակներ.—

1. Նախ դիմուեցաւ Eglise Libreի ղեկավար-
ներուն: Ե. Լ. ժամանակին բաժնուած եւ իբր
զատ եկեղեցի հաստատուած էր հետեւեալ երեք
զլխաւոր պատճառներով:

ա.— Որ եկեղեցին պետութենէն անկախ ըլ-
լայ:

բ.— Որ եկեղեցին որոշ հաւատոյ հանգանակ
մը ունենայ:

գ.— Եկեղեցւոյ անդամները նկատուին անոնք
որ կրնան հրապարակային դաւանութեամբ տալ
իրենց վկայութիւնը:

Դիտուեցաւ որ ժամանակը արդէն վերցուցած
էր ա. և բ. արդեւքները: Դաւով գ. ին Ե. Բ. և Ե. Բ.
Ե. իրենք ալ կը նկատեն իրենց կարօտութիւնը
այս կէտին մէջ ու կը փափաքին բարեփոխուե-
լու, ուստի — գէթ երեւութապէս — ալ պատ-
ճառ չկար որ Ե. Լ. չմիանար:

Դեկտ. 1935ին Mazametի մէջ գումարուեցաւ
իրենց Միութեան ժողովը: Խորհրդածութեանց

սկիզբէն իսկ մեծ տարակարծութիւն երեւան ե-
կաւ: Տակաւին Միացման Հանքերուն գործակ-
ցելու ծրագիրը վաւերացուեցաւ: 37 քուէ դրա-
կան, 21 հակառակ եւ 6 ձեռնպահ թիւերը ցոյց
կուտան որ Ե. Լ. ի ներկայացուցիչները հետու
են լայն մեծամասնութիւն մը կազմելէ այս փա-
փուկ ձեռնարկին շուրջ:

Ղեկավարները գործի լծուեցան, ինչ որ մե-
ծապէս շնորհապարտ թողուց Միացման ձեռնար-
կունները: Եթէ յաջողէր Ե. Լ. շուրջ 50 եկեղեցի
կը բերէր Միութեան: Արդէն յիշեցինք որ 1936
Փետրուարին բանակցութիւնները շատ ձգտուած
էին: Ե. Լ. ի ներկայացուցիչները նոր ազդեցու-
թիւններ բերին, օժանդակեցին բանաձեւերու
խմբագրութեան եւ փարատեցին ձգտեալ մըթ-
նոլորտը:

2. Նմանօրինակ դիմում մը կատարուեցաւ Մե-
թոտական եկեղեցիներու մօտ, որ շուրջ 30 կեդ-
րոններ կը հաշուեն: Անոնց միջեւ ալ եղաւ վա-
րանում, քննադատութիւն, բողոք եւն: Լսեցի
սակայն որ Մեթոտականներուն օժանդակ մար-
մինները որ անգլիացի քրիստոնեաներ են, քաջա-
լերած են Միութիւնը: Ինչ որ ալ ըլլայ, աննը-
կատ թողուեցաւ փոքրամասնութեան ընդդիմու-
թիւնը եւ անոնք ալ իրենց ներկայացուցիչները
զրկեցին Միացման խորհրդաժողովին:

3. 89 տարիներէ ի վեր գոյութիւն ունի Յը-
ըանսան աւետարանող Ընկերութիւն մը, ծանօթ՝
Ste. Central Evangelique անունով: Ցարդ 121
կեդրոններ կազմակերպուած են անոր Հանքով:

Այս Միսիոնարական ընկերութիւնը որ կ'ազ-
րէր եկեղեցիներու կողքին, իր կարգին ինքն ալ

հետաքրքրուեցաւ Միացման հարցով: Մինչ կը գումարուէր Reimsի Միութեան ժողովը, ընկերութիւնը հանդիսաւոր յայտարարութեամբ մը իր փափաքը յայտնեց միանալու եւ ձուլուելու նոր կազմուելիք Միացեալ եկեղեցիին: Հա՞րկ է ըսել թէ ի՞նչ խանգաւարութիւն յառաջ բերաւ այս առաջարկը, եւ թէ որպիսի սիրով ընդ առաջ փութացին անոր, միացման ձեռնարկունները:

4. Վերջապէս Paris, Strasbourgի եւ Montpellierի աստուածաբանական համալսարանին բոլոր ուսանողները — բացի մէկէն — խնդրագիրներ ուղարկած են առ որ անկ է, խնդրելով որ իրականանայ Միութիւնը:

Այսպէս հրահարուած միջնորդտի մը մէջ էր որ տեղի ունեցան Միութեան ժողովները:

Reimsի եւ Agenի Միութեան ժողովները:

1936 Յունիսի սկիզբը Reimsի մէջ տեղի ունեցաւ E. R. E.-ի Պատմական Ազգային Միութեան ժողովը:

Հոն ի մէջ այլոց երեւան եկաւ Միացման հարցը: Օրակարգին մէջ կարեւոր տեղ կը բռնէր հաւատոյ հանգանակին եւ ձեռնադրութեան բանաձեւերը: Երկար ժամերու ընթացքին կրկին եւ կրկին քննուեցաւ Միացման հարցը զանազան տեսակէտներէ: Լսուեցան թելադրութիւնք, քննադատութիւն, բողոք եւ քաջալերութիւն, առաջարկներ եւ փոխ առաջարկներ:

Այս համաժողովէն քիչ առաջ Chrétiens Evangeliquesները Mialletի մէջ հաւաքուելով արդէն ճշդած էին իրենց դիրքը: Պաշտօնական օրականներու մէջ արդէն ժամանակին հրատարակած էին իրենց «Յայտարարութիւն-Բողոքը»: Ներկայացուցիչները Reimsի մէջ մինչեւ վերջը կատարեցին իրենց վրայ դրուած պարտականութիւնները: «Միացման ներկայ եղանակը չենք կրնար ընդունիլ եւ չենք կրնար քուէարկել բանաձեւերը» ըսին: Կրկին շեշտուեցաւ նոյն բանաձեւերուն տարբեր մեկնութիւններ արուելու պարագան, «Ուրեմն այս Միութիւն չէ» ըսին, «չենք կրնար ծանրաբեռնել մեր խղճերը, մեր հաւատքէն չենք կրնար շեղիլ, ոչ ալ կրնանք մեր լոյսերուն անհաւատարիմ ըլլալ: Ազօթքով կ'ստանանք մեր պատասխանատուութիւնները, չենք զատուիլ, սակայն խմբակ մը չէ որ կը կազմենք, այլ պարզապէս հաւատարիմ կը մընանք E. R. E.-ի, կը շարունակենք զայն 1872ի դաւանանքով»: Թիւրիմացութեանց տեղի չտալու համար Միութեան սեղանին վրայ դրին նաեւ

իրենց յայտարարութիւնը գրաւոր:

Ժողովականները արդէն կ'սպասէին այս քայլին, տակաւին խոր լուսութեան եւ ցաւի մէջ լըսուեցաւ այս յայտարարութիւնը: Առաջնորդները խօսեցան եղբայրական սիրոյ եւ գործակցութեան վրայ: «Իրարու պէտք ունինք դեռ» ըսուեցաւ:

Դիրքերու ճշդումէն յետոյ կատարուեցաւ քուէարկութիւնը, եւ լայն մեծամասնութիւնը տուաւ իր հաւանութիւնը:

Միւս կողմէ E. R. Agenի մէջ կը գումարէր իր հանդիսաւոր ժողովը նոյն հարցին շուրջ: Նոյն քննութիւնները եւ պրպտումները: Աչքառու կէտը սակայն այս է: Agenի մէջ երեւան եկաւ նոթ մը որ շատ քաղցրաւոր չէր, նոյնիսկ ղեկավարներու ականջին: Իսկական արդիականները, որոնք շատ որոշ վերապահումներով եւ իրենց ազատական մեկնութեանց վստահելով էր որ ընդունած էին բանաձեւերը, ձայն բարձրացուցին: Կ'զգային որ E. R. E.-ի իրենց պաշտօնակիցներէն շատեր արդարեւ այլապէս կ'ընդունէին նոյն խօսքերը: Այս կէտը E. R.-ի առաջնորդներուն ուշին յանձնուեցաւ, որոնք խնդրեցին իրենց թողուլ կարգադրելու հարցը եւն: Անորոշութիւնը ականբեւ է, ինչ որ կարդարացնէ շատերու վախերը: Ի վերջոյ վաւերացուեցաւ համաձայնութիւնը:

Շեշտենք թէ այս կերպով Միացումը դարբնուած լրացած չէ: Ո՛չ, այլ հիմա սկզբունքով եղած է համաձայնութիւնը: Հիմա պիտի գումարուին շրջանակային Միութեան ժողովներ, լաւ եւս լսելու ժողովուրդին ձայնը: Դեռ շատ ճամբայ կայ կտրելիք: Սակայն ոչ նուազ հիւսուեցան Միացման հիմքերը, եւ կամուրջները ձգուեցան զանազան կազմակերպութիւններու միջեւ: Ապա կը մնան մեծագոյն խոչնդոտներ գործնական տեսակէտէն:

Ի՞նչ օրինական ձեւերով պիտի հիմնուի նոր Միացեալ եկեղեցին: Ազգարարել կառավարութեան թէ ամէն ինչ լուծուած է եւ կազմել նոր բան մը, կամ գտնել կեղծոնական գետին մը, հաւաքական օրինադիւծ-ծրազիր մը, որ ներկայացնէ Միացեալ եկեղեցիին դատական էութիւնը եւ անոր շուրջ խմբուելով կարգադրել հարցը: Սա դեռ մութ է:

Կան նաեւ շատ փշոտ եւ նեղացուցիչ հարցեր, շէնքերու եւ ստացուածքներու կէտերը: Ֆինանսական տեսակէտն ալ դժուար է: Պարտքերու հարցերն ալ կան: Վերջապէս կայ սպառնալից ամպ մը: Chrétien Evangeliquesները կ'սկըսին խորհիլ թէ իրենց յարանուանութեան մե-

ծամասնութիւնը կը լքէ Ե. Բ. Է-ը, անհաւատաբար ըլլալով այդ Միութեան, ինքնաբերաբար դադրած կ'ըլլայ իրաւունք ունենալէ բոլոր կալուածներուն եւ շէնքերուն վրայ որոնք կը մնան Ե. Բ. Է. ներկայացնող հաւատարիմ փոքրամասնութեան: Այս կէտը կը մտահոգէ շատերը, կարելի պիտի ըլլա՞յ համաձայնիլ, կամ թէ իրաւական կամ դատական տազնապահ՞ պիտի ծնին:

Ահա նոյնքան մտահոգիչ կէտեր, որոնց լուծումը կարելի չէ ընդհնարել դեռ: Հիմա օրէնսդէսները ոգի ի բոնի կ'աշխատին հարթել այս կնճիռները: Պիտի յաջողի՞ն:

«Եթէ չըլլայ ետ կ'երթանք» կ'ըսեն յոռետեսները յիշելով որ Ե. Բ. Է. ի «մնացորդը» կանգուն է դեռ:

«Ուր որ կամք կայ, հոն ճամբայ կայ» կ'ըսեն լաւատեսները: Մօտ ատենէն կրնանք աշխարհի ներկայացնել «Ֆրանսայի Բարեկարգեալ Միացեալ Եկեղեցին»:

Անտարակոյս ձեռնարկը մեծ եւ նպատակը վեհ է: Թէ այս ձեռնարկը իր մեծութեան չափ ալ օգտակար պիտի ըլլա՞յ թէ ոչ, այս ալ Աստուծոյ եւ ապագայի գաղտնիքն է:

Առ այժմ սակայն մեծամասնութիւնը գոհ է: Միացեալ, ուժեղ, կազմակերպեալ եկեղեցիի մը պատկերը շատերը կը շլացնէ: Փոքրամասնութիւնը դժգոհ է, եւ ինքնամփոփ նոր ուղեգիծներ պիտի մշակէ զարգանալու եւ աճելու:

..

Քանի որ Ֆրանսայի մէջ կ'ապրինք եւ կողք կողքի՝ Ֆրանսական Բարեկարգեալ եկեղեցիներուն հետ, որոնց մէջ ունինք բաղմամբիւ բարեկամներ, գործակիցներ եւ պաշտպաններ, անկարելի չէ որ ուշ կամ կանուխ, ուղղակի կամ անուղղակի կերպով, մենք ալ կերպով մը շրջման մէջ գանք այս հարցին հետ միատեղ: Ահա պատճառը արդէն որ մեզ մղեց այս պատմական գիծերը ներկայացնելու Հայ Աւետ. եկեղեցիներուն ի Ֆրանսա:

Ի՞նչ կը խորհինք այս հարցին հանդէպ: Անշուշտ «Բանբեր»ի ընտանիքին մէն մի տնդամը ունի իր անհատական գաղափարը: Մենք ալ մեր վերջաբանով մեր կարծիքը յայտնելու թոյլտրութիւնը կը խնդրենք:

Զ. Բ. Պ.

Փարիզ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՇՆՈՐՀՔԸ

(Փիլ. Ա. 3 - 8)

«Կը գոհանամ իմ Աստուծմէս ամէն անգամ որ ձեզ կը յիշեմ»: Որչա՛փ բնական կուգայ Առաքեալին շնորհակալութեամբ սկսելու իր թողութեան: Շատ աւելի զգայնիկ է Աստուծոյ ողորմութեանց հանդէպ՝ քան թէ մարդոց հակառակութեան: Անոր համար Շնորհքը ամէն ինչ կը զերազանցէր: Ուրեմն քանի որ այդչափ յայտնապէս կը տեսնէր Աստուծոյ ողորմութիւնը, անդադար պատրաստ էր զԱստուծոյ փառաբանելու: Անոր երգերը շատ աւելի արագ էին քան գանգատները: Գանգատը դեռ չարթնցած, երգերը կը բարձրանային: Այն մարդը որ Աստուծոյ հանդէպ փառաբանութեամբ լեցուած է, այնքան շուտով չքննադատեր իր ընկեր արարածները: Պօղոս միշտ պատրաստ էր զովեստով խօսելու, որովհետեւ զԱստուծոյ փառաբանելը իրեն բնութիւն եղած էր: Այնչափ յստակօրէն կը տեսնէր Շնորհքի նախագիծը՝ որ կարող էր նոյնիսկ մեղքի աւելցուքի ու երկարատեւ անհոգութեան մէջ թաղուած սրբազան բաղձանքներու ծրերը նշմարել: Փիլիպպեցւոյ տրուած շնորհքները սակայն թաղուած չէին: Անոնց՝ Տէրջը հետ ունեցած նմանութիւնը բացարձակապէս յայտնի էր: Անոնց՝ առաքեալին վրայ թողուցած յիշատակը ոսկեայ ճառագայթի մը նման կ'երկարէր անցեալ տազնապալի ու բաղմաշխատ տարիներու վրայէն: Երկարածի՞ք ճառագայթ մը որ երբեք ընդմիջուած չէր անհաւատութեամբ: Այնչափ պայծառ էր անոնց յիշատակը իր մտքին վրայ, որ ամէն անգամ որ իր ակնարկը կը դարձնէր այն փայլուն ճառագայթին՝ իր սիրտը գովաբանութեամբ կը լեցուէր:

«Միշտ, իմ ամէն խնդրուածքիս մէջ, ձեր ամենուն համար ուրախութեամբ աղօթք կ'ընեմ»: Մարդիկ երբեմն պարտականութիւն մը կամ աշխատանք մը կը սեպեն աղօթքը: Աղօթքի գերադոյն աստիճանը ուրախութիւնն է: Ճշմարիտ աղօթքին մէկ ճշմարիտ գաղափարն ալ Աստուծոյ հաճոյք պատճառելն է: Գերիի մը նման՝ դժկամակութեամբ ուրիշի մը համար աղօթելը չը

կրնար Տէրոջը հաճելի ըլլալ: Մեծ առանձնաշընորհում է մեզի՝ զաւակներու նման մեր երկնաւոր Հօր ներքին սենեակին մէջ ներկայանալ՝ այն երջանիկ վստահութեամբ թէ մեր ճամբորդակիցները իրենց անուններովը յիշելը Տէրոջը հաճելի է: Այսպէս Տէրոջը ուրախութիւնը մեր զօրութիւնը կ'ըլլայ: Անդադար բարեխօսենք ուրիշներու համար, զիտնալով թէ Տէրոջը հաճութեան ազդեցիկ չցամքիր, եւ ուրախութեամբ ջուր քաշենք փրկութեան աղբիւրներէն:

«Աւետարանին հաղորդ ըլլալնուդ համար առաջին օրուրնէ մինչեւ հիմա»: Աստուծոյ սիրոյն մեզի նուիրուած ամենէն ընտիր պարգևներուն ցանկին մէջ կը գտնուին նաեւ մեր հոգեւոր բարեկամները: Պատերազմիկի մը քաջութիւնը մեծապէս կ'աւելնայ՝ երբ իրեն կ'ընկերանայ ճշմարտութեան համար պատերազմող կտրիճ մը: Մեր համոզումները կը ճոխանան երբ կը դիտենք ընկեր հաւատացեալներու կեանքն ու քաջութիւնը: Հաւատարիմին հաւատքը անխառնափելիօրէն անձնուրաց է ու փոխանցիկ: Կենսունակ կորուով մը կը վարակէ իր հաւատակիցները եւ ամէն մէկ անգամ կը լեցուի Աստուծոյ զօրութեամբը: Վստահութեան այս ազդեցիկ փոխանցումը կը գտնուի մանաւանդ փորձառու զինուորներու վրայ, որոնք «առաջին օրէն Աւետարանին հաղորդ եղած են»: Փորձուած զինուորի մը ներկայութիւնը նորընտիր զօրքերուն մէջ, անգին հարստութիւն մըն է: Նախապէս վարուած ճակատամարտի մը մասնակցած անհատ մը անդորրութիւն ու վստահութիւն կը ներշնչէ այլապէս անփորձ զօրախումբի մը:

«Այս մասին վստահ ըլլալով, թէ Ան որ ձեռք մէջ բարի գործ մը սկսեց, մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ: Հունձքին Տէրն է որ նաեւ կը ձեւակերպէ սերմը: Ան կ'ստեղծէ նախնական մղումը ու կը հասունցնէ նկարագիրը: Անոր ձեռքին գործն է զարնան վերակենդանացումը ու աշնան հասունցնումը: Անիկա նորատունկ կաղնին խնամելով կը հասցնէ վեհափառ բարձրութեան մը ու իր շնորհալի Արեգակը կը տարածէ թէ ծիւերուն եւ թէ ծառերուն վրայ: Պիտի չթողու որ հոգեւոր մանուկներ մնանք, ոչ ալ պիտի թուլատրէ որ հոգեւոր աճման արգելք եղող դանդաղ զգուշաւորութեամբ ծերութեան հասնինք: Անիկա պիտի կատարելագործէ մեզ տարուէ տարի իր շնորհքն ու զօրութիւնը մեր վրայ տեւցնելով, որպէսզի ամէն ինչ գեղեցիկ

երեւնայ իր եղանակին: Ամէն ամիս մեր աճման համապատասխան պտուղ պիտի կրենք: Գործը սկսող բարի Տէրը զայն անկատար եւ անօգուտ պիտի չթողու: Անոր շնորհքը ի կատար պիտի հանէ իր սկսածը մինչեւ որ մեզմէ իւրաքանչիւրին համար կարենայ ըսել, «Այն գործը զոր ինծի տուիր ընելու՝ լիցուցի»:

«Ինչպէս ինծի արժան ալ է ձեր ամենուն վերայ այս բանը խորհիլ՝ ձեզ իմ սրտիս մէջ ունենալուս համար»: Մենք միշտ լաւատես ենք այն անձերուն համար զորոնք մեր սիրտերուն մէջ կը կրենք: Մեր սիրտերուն շրջակայքը բռնակող անհատներուն համար յոյսերնիս շուտով կը կորսնցնենք ու կ'սկսինք վախճալ անոնց մասին: Սակայն երբ մարդիկ տաք տեղ մը գտնուած են մեր սրտերուն մէջ, յոյսի լոյսը երբեք չհեռանար երկնակամարէն: Անոր համար է որ մայրեր լաւատես կը մնան իրենց զաւակներուն հանդէպ՝ նոյնիսկ եթէ ամէն ուրիշ անհատ յուսահատի: Անոնք իրենց զաւակները իրենց սրտերուն մէջ ունին: Ճիշդ այս պատճառով է որ Բարի Հովիւը լաւատես է քեզի ու ինծի համար եւ այս պատճառաւ 99ը անապատին մէջ կը թողու եւ կորսուածին հետէն կ'երթայ «մինչեւ որ զայն գտնէ»: Այս ամէնը կ'ընէ մեզ իր սրտին մէջն ունենալուն համար: Որքան ընդարձակ յուսով միջնորդուող մը պիտի պատէինք զիրար եթէ իրարու սրտերուն մէջ ընակէինք: Եւ Յօսի Զոյսը միմիայն կաթողին սիրոյ ծնունդն է:

«Իմ կապերուս մէջ եւ Աւետարանին ջատագովութեանը ու հաստատութեանը մէջ, եւ ամէն ինծի եղած շնորհքին հաղորդ ըլլալնուդ համար»: Ահա շնորհալի կապերու բաղադրութիւնը: Քառապատիկ կապ մը զոր կարելի չէ կտրել: Զարմանք չէ որ Առաքեալը զանոնք իրեն սրտին մէջ կը կրէ: Անոնք մէկ էին իրեն հետ տառապանքի մէջ: «Իմ կապերուս»: Զկայ բան մը որ զանազան անձեր այնքան ի մի կը ձուլէ, որքան միասին նոյն ցաւերէն ու նեղութիւններէն անցնիլը: Մէկ էին իրեն հետ՝ քրիստոնէական հաւատքի կեդրոնական միջնաբերդը ու ժպտօրէն պահելու մէջ: Մէկ էին իրեն հետ՝ իրենց ճոխ եւ ուրախ փորձառութեամբ այս կեդրոնական ճշմարտութիւնները զօրացնելու մէջ: Եւ մէկ էին իրեն հետ՝ զինք իրենց ապրուստի միջոցներուն մասնակից ընելով: Միասին միեւնոյն սեղանը նըստած՝ միեւնոյն շնորհքով կը սնանէին: Երբ օր մը զայ որ կարելի ըլլայ այդ բաներն ըսել նաեւ

Ա Ղ Օ Թ Ք

Անդադար աղօթք ըրէք
Ա. ԹԵԱ. Ե. 17

Եթէ երբեք պապական հրատառնոր եղջերուն՝
Քառամբակ կ'արշաւէ ականակիւ շուրերուն,
Եթէ երբեք բազմերանք ծաղիկները լուսաբաղձ՝
Կը դառնան միշտ արեւուն ջերմի կարօտ, սրբաբաղձ...

Եթէ երբեք խօլ սիրով թիթեռները՝ լամբարի
Շուրջ կը պարեն մինչեւ որ դառնան ափսոս, մոխիրի...
Ու դեռ եթէ անբնական մոլորակներ լուսածիր
Կ'ուզեն անխոնջ հոլովուիլ շուրջ առանցքի մ'անհարկի:

Եթէ երբեք սրբաճաք ձագուկները ագռաւի,
Կ'աղաղակեն դէպի վեր հորիզոնին տակ ծաւի.
Ու դեռ եթէ օրական մանուկները եօթն անգամ
Իրենց մայրը կ'որոնեն ի սէր կաթին քաղցրահամ,

Ալ որքան դո՛ւն, ով հոգիս, պէտքը ունիս Յիսուսին,
Պէտքը Անոր խօսքերուն, Անոր ուժին եւ լոյսին.
Եօթանասուն եօթն անգամ. դուն ամէն օր ո՛վ հոգի՝
Ամենուրէք սրբաբուրդիս պէտքը ունիս աղօթքի:

Արդ՝ աղօթէ ո՛վ հոգիս, եւ աղօթէ՛, աղօթէ՛...

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Ներկայ եկեղեցիին նկատմամբ, անիկա պիտի
կարենայ անդիմադրելի ու յաղթական ուժով
յառաջանալ Սատանային յափշտակած ու աւե-
րած երկրին վրայէն:

«Քանզի վկայ է ինծի Աստուած որ ինչպէս
փափաք ունիմ ձեր ամենուն վրայ Յիսուս Քրի-
ստոսի գութովը»: Պօղոս երբեք չվախնար Ա-
մենակարողը իրեն վկայ կանչելու: Կրկին եւ
կրկին հանդարտութեամբ եւ վստահութեամբ
Տէրոջը կը դիմէ որպէսզի Անիկա Իր խօսքը
հաստատէ: Տէրոջը հետ առանձնացած կեանք մը
վարելուն պատճառաւ՝ իրեն վերաբերեալ ամէն
խնդրի վրայ տարածուած է Աստուծոյ դէմքին
լոյսը՝ նման այն բաց դաշտին որ կ'ողողուի Ա-
րեգակին լուսովը: Անիկա շարունակ գիտակից է
Տէրոջը նուիրական ներկայութեան: Երբ եւ ո՛ւր
որ կը նայի, կը նկատէ Ամենակարողին դէմքը:

Ուրեմն իր կեանքին մէջ չկայ բան մը որ մը-
թութեան պտուղն ըլլայ, ալ թաւն ինչ լոյսի
մէջ ծնունդ կ'առնէ, ուստի կը համարձակի Տէ-
րը վկայ կանչել, որպէսզի Անիկա հաստատէ ի-
րեն վերաբերեալ ամէն բանի ազնուական ու
փառաւոր ծնունդը: Մեզմէ քանինե՛ր Տէրոջը վը-
կայութենէն պիտի վախնային: Քանինե՛ր ինք-
զինքնին Անկէ պիտի ծածկէին եւ Անոր քննիչ
ճառագայթներէն հետ պիտի քաշուէին: Երանելի,
եռապատիկ երանելի է այն կեանքը որուն ծա-
ծուկ մասերը Աստուածային լուսով ողողուած ըլ-
լալով՝ կրնայ խոնարհաբար Տէրը իրեն վկայ
կանչել՝ հաստատելու թէ իր մէջ գտնուած ամէն
ինչ Աստուածային շնորհքի դրօշմը կը կրէ:

Ի՞նչ բանի վկայ կը կանչէ հոս Տէրը: «Որ ինչ-
պէս փափաք ունիմ ձեր ամենուն վրայ Քրիստոս
Յիսուսի գութովը»: Կ'ըսէ թէ ինք Տէր Յիսուս
Քրիստոսի սրտին մէջ կը բնակի եւ «ամէն կա-

ԱՍԻԱՅԻ ԵԹՐԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

000

3.— ՊԵՐԳԱՄՈՆ

(Յ. Տ. 313 600)

Աշխարհ եկեղեցիին խառնուած

Պերգամոն, ներկայիս աւերակ, որուն մօտը կը գտնուի նոյնանուն թրքարնակ փոքր քաղաք մը (Պէրղամա), հին հեթանոսական պաշտամունքի կեդրոններէն մին էր, երեւելի իր տաճարներով եւ մատենադարանով: Այս քաղաքին մէջ կը պաշտուէր Ասկաղեպիոս, բժշկութեան չաստուածը: Ժողովուրդը նուիրուած էր պղծագործ պաշտամունքի. ամէն կերպ պիղծ գործեր եւ անբարոյ կեանք մաս կը կազմէին իրենց պաշտամունքին:

Ասկաղեպիոսի տաճարին մէջ կը պահուէր և կը սնուցուէր ողջ օձ մը: Թիւրեւս այս 2 պատճառներով է որ Տէրը այդ քաղաքը կը կոչէ «Սատանայի աթոռին եղած տեղը» հ. 13:

Տէր Յիսուս կը յայտնուի այս եկեղեցիին սըրած երկբերան սուրով, քննող եւ յանդիմանող: Կոստանդիանոս Մեծի դարձովը թէեւ եկեղեցին ազատութիւն ստացաւ, հալածանքը դադրեցաւ, սակայն աւելի մեծ վտանգ մը կ'սպառնար եկեղեցիին: Նա այլեւս աշխարհային ապաստան մը ունէր: Արդէն Պերգամոն բառին նշանակութիւնը ըստ յունագէտներու՝ պիրղոս — աշտարակ — եւ Ղամոս — հարսանիք — այսինքն աշ-

րեկցութեան» այդ սիրտէն՝ Փիլիպպէի աշակերտներուն կարօտը կը քաշէ: Իր կարօտը կը համապատասխանէ իր Փրկչին կարօտին: Իր բաղձանքին բազկերակը կը տրուի Տէրովը բաղձանքներուն բազկերակին հետ միասին: Սքանչելի փորձառութիւն մը՝ որուն համար զԱստուած վկայ կը կանչէ, որպէսզի Անիկա վկայէ իր ըսածին ճշմարտութեան ու զօրութեան: Քրիստոսի սրտին մէջ բնակելով մասնակից է Անոր՝ հոգիներու հանդէպ քաջած ցաւին: Բաժին ունի փրկութեան յոգնեցուցիչ ու տառապալի գործին ալ: Մասնակից է Անոր չարչարանքներուն: Քրիստոսի նեղութիւններուն պակասը կը լեցնէ: Ոչ մէկը կրնայ Քրիստոսի մէջ բնակիլ ու չմըղւիլ ուրիշներու համար զոհուելու բաղձանքէն:

Խարհի իշխանութեան հետ եկեղեցիին դաշինքը, ամուսնութիւնը, խառնուիլը ըսել է: Շրջան մը, որու տեւողութեան եկեղեցին խառնուեցաւ աշխարհի, ուրկէ ծագում առաւ պաշտամունքի եւ սովորութեան նոր կերպ մը, որ կը յատկանշէ եկեղեցական այս շրջանի նկարագիրը: Թէեւ առաջները հալածանքի բովէն անցած եկեղեցական հայրեր եւ հաւատացեալներ հաւատարիմ մնացին Քրիստոսի անուանը եւ հաւատքը չուրացան: Այն ատեն երեւան եկող մոլորութեանց դէմ պաշտպանեցին Յիսուս Քրիստոսի հաւատքը եւ հիմնական ճշմարտութիւնները, որոնց կը պարտինք Նիկիոյ հաւատոյ հանգանակը (Յ. Տ. 325), որու համար Տէրը կը գովէ եկեղեցին: Սակայն կամաց կամաց Նիկողայոսեանք հոն զօրացան: Անոնց կերպն էր տիրապետել:

Տէրը կ'ըսէ, «Հոգ Բաղաամի վարդապետութիւնը բոնողներ ունիս» հ. 14: Բաղաամ կը նշանակէ — Ժողովուրդը մահացնող — հակառակ իր աստուածապաշտութեան, արծաթախրութիւնը զինք ստիպեց Տէրովը ծրագրին եւ Ժողովուրդին դէմ զործելու: Ըստ երեւոյթին, Եգիպտոսի նեղութենէն ելլող Իսրայէլը օրհնեց, սակայն ծածկաբար թելադրեց Բաղակի Իսրայէլը մոլորեցնել կռուքերու զոհուածով եւ կռապաշտ պոռնկութիւնով: Բաղաամ գիտէր թէ եթէ Իսրայէլ այսպէս խառնուէր օտարախառն պաշտամունքի, Աստուծոյ ներկայութենէն պիտի զրկուէր եւ պիտի պարտուէր: Դիւայի'ն վարդապետութիւն, որով յաջողեցաւ Իսրայէլէ 24,000ներ մեռցնել թուոց ԼԱ. 16, Բ. Պետ. Բ. 15, Յուդա 11, թուոց ԻԵ: Հալածանքի եւ նեղութեան յաղթական եղող Աստուծոյ եկեղեցին ալ ինկաւ Նիկողայոսեանց մոլորութեան մէջ: Անոնք արդէն կային առաքեալներու ատենն իսկ, սակայն Սատանան յաղթութեամբ յառաջանալով եկեղեցիին ընթացքը կեցնելու համար փառքի եւ արծաթախրութեան փափաքով վարձեց զանոնք որպէսզի նոր Իսրայէլը մոլորեցնեն:

Որո՞նք էին Նիկողայոսեանք: Հաւանական է Նիկողայոս նորահաւատ Անտիոքացիին վարդապետութեան հետեւողներն էին Գործ. 2. 3: Թիւրեւս Նիկողայոսի մոլորութիւններ, որ Պողոս առաքեալ գրեց Տիմոթէոսի որ ընտրածը նորահաւատ չըլլայ Ա. Տիմ. Գ. 6: Ասոնք կը փափաքէին եկեղեցիին մէջ ընդունիլ հրէական եւ կռապաշտական կարգ մը սովորութիւններ, որպէսզի աշխարհ չխրտչի քրիստոնէութենէն եւ չհալածուին Փիլ. Գ. 18-19. Գաղ. Ա. 10, եւ այս միջոցով հրապուրիչ դարձնել եկեղեցին, ինչպէս

կը խորհին ներկայիս իմաստուն Նիկողայոսեանց շատերը:

Նիկողայոսեանք (յունական բառին իմաստն է «ժողովուրդին տիրապետողներ») քահանայական դաս մը սկսան կազմուիլ, եպիսկոպոսներ սկսան ձգել Աւետարանի ծառայութիւնը եւ իրենք զիրենք ժողովուրդէն բարձր դասելով եկեղեցիին վրայ տիրել: Կղերին տիրապետութիւնը Տէրջը առջեւ զգուշիւ է Մատթ. ԻԳ. 44, Գ. Յովհ. 9, Ա. Պետ. Ե, 2-4:

Քրիստոնէութիւնը պետական կրօնք ըլլալէն վերջը, կապալաշտական սովորութիւններ քրիստոնէայ անուան տակ սկսան մուտք գտնել եկեղեցիէն ներս, կուռքեր սուրբերու անուանով մը կրտուեցան, Արտեմիս եղաւ Մարիամ, Աստղիկ՝ Մարթա, Բաքոս՝ Բարեկենդան եւն: Իսկ քուրմեր եւ քրմուհիներ առանց իրենց կապալաշտական սովորութիւնները փոխելու, դարձան քրիստոնէական, իրենց հետը բերելով նոր մոլորութիւններ, իսկ Աստուծոյ զաւակներ քրիստոնէութեան յաղթանակէն ուրախ, չքննեցին զանոնք Աստուծոյ խօսքովը, որոնց համար Տէրը կ'ըսէ, «Իմ բերնիս սուրովը պիտի պատերազմիմ անոնց հետ» Եբր. Գ. 44-45: Շատ սուրբեր պայքարեցան, պատկերաբեկներ ջանացին եկեղեցիէն վերցնել կապալաշտական սովորութիւններ, սակայն չյաջողեցան: Ի վերջոյ Նիկողայոսեանք տիրեցին եւ եկեղեցին ինկաւ խաւարի մէջ: Աստուծոյ խօսքը ծածկուեցաւ եւ ծիսական սովորութիւններ ճշմարիտ աստուածապաշտութեան տեղը զրաւեցին: Սատանան իր խաբէութեամբը լուսաւոր հրեշտակի պէս գործելով, հալածանքէն յաղթական ելլող Աստուծոյ եկեղեցին Բաղամահան խորամանկութեամբ մոլորեցուց:

Արդեօք չմնացի՞ն հաւատարիմներ: Այո՛, այդ դժուարին շրջանին մէջ ալ գտնուեցան հաւատարիմներ, որոնք ստիպուեցան հեռանալ կազմակերպեալ եկեղեցիներէն, առանձին կամ խմբովին ապրելով մեղքի հոսանքէն հեռու եւ նախատուեցան ու հալածուեցան: Այս շրջանին էր որ մեր հայրենի աշխարհն ալ ենթարկուեցաւ Հռովմէական ազդեցութեան, ընդունելով յունական սովորութիւնը Կեսարիոյ եպիսկոպոսներու ալիքովութեամբ, որոնք իրենց պաշտոմունքին յարմար տաճարներ կանգնելով հալածեցին Աւետարանի հաւատարիմ Աստուծոյ զաւակները եւ պարտադրեցին ծիսաւաշտութիւնը:

Տէրը կը խօսի Հոգիին ձայնը լսելու պատրաստ հաւատարիմներուն, որոնք յաղթական զուրս պիտի գային Սատանայի այս խաբէութեանէն, եւ կը խոստանայ անոնց պահուած մանանայէն ուտել տալ:

Տեսանելի եկեղեցին՝ ա'լ Յիսուս Քրիստոսի հետ կենդանի յարաբերութիւնը մոռցած, Աստուծոյ կենդանի խօսքին վայելքը ձգած էր: Սակայն Տէրը կը ճանչնայ իրենները, որոնք կը վայելեն զինք, երկիրքէն իջած ճշմարիտ հացը Յովհ. Զ. 32, 33, 48-52, պահուած Մանանան, Տէր Յիսուս Քրիստոսը, որուն մէջ պահուած է իմաստութեան եւ դիտութեան բոլոր գանձերը՝ Կող. Բ. 2, 3, զոր միայն յաղթողները կը վայելեն եւ տեղեակ կ'ըլլան իր խորհուրդներուն (գաղտնիքներուն) զոր աշխարհ չգիտեր եւ չհասկնար:

«Ու ճերմակ խիճ մը, վրան նոր անուն մը դրուած» հ. 47: Ասկողեպիոսի ուխտաւորները կ'ընդունէին եւ կը կրէին խիճ մը, որուն վրայ խորհրդաւոր նշան մը քանդակուած կ'ըլլար:

Հին ատեններ բանտարկեալներ իրենց անմեղութեան եւ արդարութեան նշան, ճերմակ խիճ մը կ'ընդունէին:

Նոյնպէս յաղթողներ, պնտրադմէ վերագարձին իբր պատուոյ քաղաքացիութեան նշան ճերմակ խիճ մը կ'ստանային:

Խիճը նշան էր նուիրական ուխտի՝ երկու բարեկամ անձերու, որոնք նոյն խիճը կուտրելով իրարու հետ կը փոխանակէին, ու նեղութեան պարագային իրարու դիմելով օգնութիւն կը գտնէին:

Տէր Յիսուս ճերմակ խիճ մը ունի յաղթողին քով, որուն Ինքզինքը յայտնած է, զայն բոլոր իր ախտերէն բժշկելով Ա. Պետ. Բ. 24:

Տէրը վստահութիւն տուած է յաղթողին թէ իրմով արդարացած, խաղաղութիւն ունի Աստուծոյ հետ Հով. Ե. 1:

Տէրը կը քաջալերէ հաւատքի զինուորը, որպէսզի միշտ յաղթող ըլլայ Յովհ. ԺԶ. 35:

Վերջապէս Քրիստոսի խորհուրդը կը յայտնուի յաղթողին Եփ. Գ. 9, Տէրը կը յայտնուի որպէս՝ ա. Քրիստոս եւ Փրկիչ, զոր միայն ընդունողը գիտէ: Բ. Որպէս բարեխօս եւ միջնորդ, զոր միայն հաւատացեալը կը վայելէ Ա. Տիմ. Բ. 5, Ա. Յովհ. Բ. 1:

Անցաւ Պերգամոնի շրջանը, սակայն կան Պերգամոնացիք, Նիկողայոսեանց ոգին, որոնք կ'ուզեն եկեղեցին աշխարհի մօտեցնել, եկեղեցի եւ աշխարհ իրար խառնել, հոգիներ շահելու բարի նպատակով խնճոյքներ, հանդէսներ, թատրոններ կազմակերպելով եկեղեցիին մէջ, կամ աշխարհիկ կերպով ժողովներ եւ պաշտամունք



ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ*

ԹՈՒՐՖԱՆՏԱ

Վաթսուհի տարեկան, մեղմ ու ազնիւ արտա-
յայտութեամբ կին մըն էր, որ զէպի ինձ դառ-
նալով սկսաւ իր տառապանքներու պատմու-
թիւնը ընել: Իր անունը կը նշանակէ «Անդրա-
նիկ պտուղ»: Եւ իրաւ, պատիւ բերած է իր ան-
ուն, քանզի ինքն է որ եղած է առաջինը իր
ընտանիքին, որ հրաժարելով ձեւական քրիս-
տոնէութենէն, ընդգրկած է ճշմարիտ ապրող
քրիստոնէութիւնը անձնական փորձառութեամբ,
եւ անխախտ մնացած է անոր մէջ, հակառակ
պէս պէս փորձութեանց: Քսանըհինգ տարեկան
էր երբ իր ամուսինը ի զո՛ւր կը ջանար ըմ-
բռնել այն ճամբան, զորս թուրֆանտա ընտրած
էր եւ որ այնքան տարբեր էր իր ուղղութենէն:
Արդարեւ, ան ալ կը փափաքէր իր եկեղեցւոյ
հաւատարիմ մի անդամը ըլլալ, սակայն հոգեւոր
խորունկ կեանք մը, բոլորովին անհասկնալի կը
թուէր իրեն: Զայրացած, մտադրեց վռնտել իր
կինը: Որքան ալ կսկծալի էր այս բանը թուր-
ֆանտայի, սակայն նէ պատրաստ էր զրկուիլ
նաեւ իր ամուսինէն՝ Անոր սիրոյն համար: — «Ան
որ իր հայրը կամ մայրը... Ինծմէ աւելի կը սի-
րէ, արժանի չէ ինծի»: Բայց իրերը փոխուե-

.....

(1) Այս խորագրին տակ Բանքերի ընթերցողներուն եր-
բեմըն պիտի ներկայացնենք հայ կեանքէն կարգ մը հո-
գեւորներ ու անոնց կեանքէն կարգ մը կենդանի պատ-
կերները գործք Տօքթ. Պէւտն Ա. Գ. Օ.ի սնօրէն իր
միակ մտքական այցելութեանց առթիւ ի Սուրիա անձամբ
հաւաքած է զանոնք ներկայացնելու: Ֆրանսացի ընթեր-
ցողներու, ցոյց տալով հայ ազգին վիշտը, բայց նաեւ հայ
հաւատացեալը կենդանի պահող Ս. Հոգիին կենդանարար
զօրութիւնը:

.....

սարքելով: Տէրը ապաշխարութեան կը հրաւիրէ
իր եկեղեցին եթէ այս բաներուն թող տուած է
եւ կ'ըսէ, «Բերնիս սուրովը պիտի պատերազ-
միմ անոնց հետ» 5. 46:

Գիտենք որ բոլոր աշխարհ չարին մէջ է:

Որդեակներ, ինքզինքնիդ կուռքերէն պահե-
ցէք Ա. Յովհ. Ե. 19, 21:

Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ

Փօնտ Օպէնաս

ցան: Ամուսնոյն քոյրն ալ ապաշխարեց: Առաջ
այս երկու կնոջ միջեւ վէճ ու կռիւ դադար չու-
նէր, սակայն այնպիսի փոփոխութիւն մը, այն-
պիսի սիրալիր յարաբերութիւն մը ստեղծուե-
ցաւ իրարու հանդէպ, որ տունը բովանդակ օրհ-
նութեամբ լեցուեցաւ: Ուստի թուրֆանտայի ա-
մուսինը թէպէտ չհետեւեցաւ իր կնոջ եւ քրոջ
օրինակին, բայց հաշտուեցաւ կնոջը հետ:

Այս երիտասարդ ամուսին կեանքը զերծ չմնաց
տառապանքի փորձութիւններէ: 7 զաւակներ ու-
նեցան, որոնց հինգը մեռան եւ զրեթէ բոլորն
ալ ողբերգական պարագաներու ներքեւ: Մին ա-
պառաժի մը բարձրութենէն վար զլորուելով մե-
ռաւ, երկրորդը զհոսին յորձանքներուն մէջ խեղ-
դուեցաւ, միւս երկուքը երեք օրուան մէջ յա-
ջորդարար մեռան: Թուրֆանտա պատմեց զայս
ցած եւ յուզուած շեշտով մը, բայց վստահացուց
զիս թէ Աստուած որքա՛ն տոկալու եւ այս խոր
սուզը կրելու ոյժ եւ կարողութիւն տուած էր ի-
րեն: Եւ ոչ թէ միայն կրելու ոյժ տուած էր, այլ
իր ցաւը վերցուցած եւ բոլորովին մխիթարած
էր զինք, այնպէս որ նէ աչքերը յառած զէպի
երկինք իր զաւակները հոն պատսպարուած կը
տեսնէր:

Բայց այս բոլորը լոկ յառաջաբանը կը կադ-
մէին այն դառնութեանց, որոնք վերապահուած
էին մօտաւոր ապագային:

Զէյթուն քաղաքը եւ անոր ինքնապաշտպա-
նութեան հերոսական կռիւները ծանօթ է ամէն
հայու: Անոնց կորովի զիմազրութիւնները խոր
ատելութիւն եւ դիմադրութիւնները խոր
տեղահանութիւններու կարգը եկաւ այս
քաղաքին, թուրքերը սկսան ամենաբիրտ ու
կոշտ միջոցներով քաղաքէն դուրս քշել բոլոր
հայութիւնը: Մինչ բաժանման սրտամալիկ տե-
սարաններ կը պարզուէին, յուսահատական ճի-
չեր, աղիտղորմ լաց ու կոծ կը լսուէր ամէն
կողմ, թուրֆանտա լուրջ հանդարտութեամբ մը
տողորուած, Աստուծոյ ներկայութիւնը կ'զգար ա-
ւելի քան երբեք: Նոյնիսկ հոգեւոր, ընտանի,
սփոփարար երգեր կ'երգէր որոնք թէ՛ իրեն եւ
թէ՛ իր հայրենակիցներուն սիրտերը կը զօրաց-
նէին: Երբեք չէր խորհեր թէ զէպի փճացում կը
քալէր: Իրեն այնպէս կը թուէր թէ Խառայէլի որ-
դիններուն նման Եգիպտոսէն ելլելով զէպի ազա-
տութիւն կ'առաջնորդուէին: Ահա թէ ինչպէ՛ս
Աստուած զօրացուցած էր զինք:

Վերջապէս աննկարագրելի զրկանքներէ եւ
տառապանքներէ յետոյ հասան Տէր Զօր, Եփրա-
տի ափունքը: Հարկ չէ հոս պատմել այն խուժ-



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ

ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

զուտ տառապանքներու երկար շարքը, զոր ինչպէս ամէն աքսորուող հայ, նոյնպէս թուրքաւորացի կրեց այս անապատային վայրերուն մէջ: Օր մը, անօթի, քիչ մը պտղաբեր գետնի վըրայ հնձուած ցորենի արտ մը նշմարեց եւ ուզեց մի քանի հասկեր ժողվել: Բայց զինուորներ, որոնք կը լրտեսէին աքսորեալները, տեսան զինք, խուժեցին վրան եւ ոտքի ամենակուպիտ հարուածներով զինք այնքան ծեծեցին որ անզգայ գետին ինկաւ: Երբ ինքզինք գտաւ, կարաւանը արդէն կը հեռանար եւ միայն իր սրգին իր մօտ, կը ջանար գիտակցութեան բերել զինք: Թուրքաւորացի ամէն ճիգ ի գործ դրաւ, որպէսզի կարաւանին հասնին, այլապէս պիտի կորսուէին: Յաջողեցան:

Ուրիշ անգամ, Միջագետքի կիզիչ արեւին տակ, սաստիկ ծարուած երբ կը քալէին անընդհատ, Արար գիւղի մը մէջ հանդիպեցան ահօսացած ցեխոտ ջրակոյտի մը: Մինչ անյազօրէն այս աղտոտ ջուրը կը խմէին, արարները նետուեցան իրենց վրայ եւ անխնայ հարուածներով արգիլեցին զիրենք ջուր խմելէ: Թուրքաւորացի խեղճ ամուսինը հիւանդ, անկարող քալելու, ճամբան մեռաւ: Թուրքաւորացի կորսնցուց նաեւ իր որդին: Արարները զոյգած էին զինք, որ պատերազմէն վերջ, 4 տարուայ բաժանումէ մը յետոյ արարներէն փախելով, իր մօրը քով Հալէպ եկաւ:

Թէպէտ թուրքաւորացի ֆիզիքական առողջութիւնը լաւ չէ, բայց առողջ ու առկուր հաւատք ունեցող կին մըն է: Անիկա ներքին ուրախութեան իմաստը արտացոլացնող հոգի մըն է, որ իր լոյսի ցոլքերը կը սփռէ մթնազնած սրտերու եւ իր տառապանքի ընկերներուն շուրջ: Թուրքաւորացի յաջողած է աւելի քան մի քանիներ առաջնորդել դէպի ներքին խաղաղութեան եւ յաւիտենական փրկութեան ճամբան: Ինք չէ որ կը պարծի, այլ ուրիշներն են որ կը վկայեն իրեն համար:

ՀՈԿՏ. 4.—

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԿՈՉԸ

Դաս Դ. Առաք. ԺՁ. 6-15, Հոով. ԺԵ. 18-21

Հ. 6, 7, «Սբ. Հոգիէն արգիլուելով... Յիսուսի հոգին թող չտուաւ»: Պօղոս առաքեալի «Յիսուս Բրիստոսի գերին» ըլլալը մեր դասին մէջ աւելի յստակօրէն կ'երեւի: Դերին պարտի հնազանդիլ ոչ միայն դրական հրամաններու, հապա նաեւ ժխտականներու: Մենք սովորութիւն ունինք Պօղոս առաքեալի շատ գովեստը ընելու, եւ իրաւալ անիկա արժանի է շատ գովեստի: Բայց եթէ առաքեալը այսօր մեր մէջ ըլլար՝ մեզի պիտի ըսէր, «Ինծի նմանող եղէք, ինչպէս ես ալ Բրիստոսի» (Ա. Կոր. ԺԱ. 1): Որքան քիչ են այսօր «Յիսուսի Հոգիին» հնազանդ հաւատացեալները: Անհնազանդութիւնը երկու կերպ կրնայ ըլլալ: Առաջինը այն է որ երբ Տէրը կ'ըսէ «Գնա», խօսէ, գործէ, վկայէ, տուր», անհնազանդ հաւատացեալը կամ ուղղակի «ոչ» կը պատասխանէ եւ կամ պատճառաբանութիւններ կը գտնէ չհնազանդելով մէկտեղ ինքզինք արդարացնելու: Երկրորդ տեսակի անհնազանդութիւնը այն է որ երբ Տէրը կ'ըսէ «Մի երթար, լռէ, հանդարտ կեցիր, համբերէ, սպասէ, հոս մի երթար հապա հոն գնա», անհնազանդ հաւատացեալը (ընդհանրապէս աճապարող (աճէլէճի, ջղային) կը պատասխանէ, «Ո՛չ, պէտք է երթամ, պէտք է խօսիմ, իմ ճամբաս, իմ գիտցածս, իմ ըրածս շիտակ է»: Սորվինք հնազանդիլ նաեւ երբ Տէրը մեր ծրագրէն, փափաքածէն, ակնկալածէն, մեր սիրածէն տարբեր ճամբայ մը կը ցուցնէ: Հըտսըն թէյլը կ'ըսէ.— «Աստուծոյ մարդը եղիր, Աստուծոյ ուզած տեղեւոյն մէջ, Աստուծոյ գործը գործելով, Աստուծոյ ուզած կերպովը»:

Տես թէ հետեւեալ անձերէն ի՞նչ օրինակ կրնաս առնել: Յովնան՝ Յովն. Դ. 2: Պատիկ գերի աղջիկը՝ Դ. Թադ. Ե. 3: Աննա մարգարէուհին՝ Դուկ. Բ. 38: Անդրէաս՝ Յովհ. Ա. 41, 42: Փիլիպպոս՝ Յովհ. Ա. 46, (միւսը) Դ. Առաք. Ը. 5: Սամարացի կինը՝ Յովհ. 4. 29: Մարիամ Մագդաղենացի՝ Դուկ. Ը. 2, 3: Բառնաբաս՝ Դ. Առաք. Դ. 36, 37: Դերեզման գացող կիները Մատթ. ԻԸ. 6-8: Շիղա՝ Դ. Առաք. ԺԵ. 40, 41: Տիմոթէոս Դ. Առաք. ԺՁ. 3, 4: Լիզիա՝ Դ. Առաք. ԺՁ. 14, 15: Ապօղոս՝ Դ. Առաք. ԺԸ. 24, 25: Ահիւղաս եւ Պրիսկիլլա՝ Դ. Առաք. ԺԸ. 26, Հոով. ԺՁ. 3, 4: Փիքէ քոյրը՝ Հոով. ԺՁ. 1, 2 (նաեւ Հոով. ԺՁ. գլուխը լման):

«Ուստի մենք ալ որ այսչափ վկաներուն բազմութիւնը մեր բոլորտիքը պատած ունինք...»

ՀՈԿՏ. 11.—

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՄԸ ԸԼԼԱԼ

Դաս Գ. Առաք. ԺԶ. 22-34, Փիլ. Գ. 4-7

Գ. Առաք. մէջ Սուրբ Հոգւոյն գործունէութեան դէմ Սատանային կատաղի գործունէութեան կը հանդիպինք: Ամէն տեղ եւ ամէն պնով նա Տէր Յիսուս Քրիստոսով եղած փրկութեան դէմ կատաղի պայքար կը մղէ: Երուսաղէմի մէջ Սատանան օրէնքով արդարութեան պատրուակաւ կեղծ կրօնքի դիմակ առած էր: Լիւստրաի մէջ ուզեց Պողոսը եւ Բառնաբասը աստուածացնել (ԺԴ. 10-14), Փիլիպպէի մէջ Սատանան նախ ջանաց իր ոգիներէն միոյն միջոցաւ եւ աղախինի մը բերնով Պողոսի պատգամը հռչակելու օգնել, կաթնէս կ'ուզէր Քրիստոսի հետ դաշնակցիլ, անշուշտ յետոյ այդ քաղաքի եկեղեցին ապականելու համար (ԺԶ. 16-18): Դեռ թէեւ կը հռչակէր Պողոսի եւ Շիղայի բարձրեալ Աստուծոյ ծառաները ըլլալը, բայց Յիսուսը Տէր չէր կըրնար կոչել (հ. 17): Այսօր ալ շատեր Աստուծոյ ծառաները կը գովեն՝ բայց իրենք Սատանայի ծառաներ են: Երբ Պողոս Սատանային լուսաւոր հրեշտակի դիմակը վար առաւ, ան «մոնչող առ-լնձ» դարձաւ (հ. 19-24): Բայց մինչ լուսաւոր հրեշտակի կերպարանքով փրկութեան ճամբան հռչակելու սատարել կեղծող Սատանան արդելք մըն էր Տէրոջը գործին եւ Պողոսի վիշտ կը պատճառէր, մոնչող առիւծ Սատանան սատարեց Աւետարանին ճշմարիտ յաղթանակին, եւ Պողոս փոխանակ այլեւս վշտանալով՝ «զԱստուած կ'օրհնէր» (հ. 25):

Մեր դասին երկու հատուածներն ալ բանտի մէջ տեղի կ'ունենան: Առաջինին մէջ (Գ. Առաք. ԺԶ. 22-34) Պողոս Առաքեալ բանա մտաւ բանտապետին փրկութեանը պատճառ դառնալու երկրորդին մէջ (Փիլ. Գ. 7-14) նա բանտի մը մէջ էր (Փիլ. Ա. 12-14) «Քրիստոսը շահելու»:

Բանտապետին, ինչպէս նաեւ Լիդիայի եւ կամ ուրիշ փրկուողներու մօտ կը տեսնենք Սուրբ Հոգւոյն կատարեալ գործը, մեղքի համոզում (հ. 30), հաւատքի քայլ մը առ Տէր Յիսուս Քրիստոս (հ. 31), այս հաւաքին բացատրութիւնը, Աստուծոյ խօսքին ուսուցումը (հ. 32), եղբայրները սիրել (հ. 33 վերջերը լուսաց), մկրտութիւն (հ. 33), առատաձեռնութիւն, հիւրասիրութիւն (հ. 34):

Գ. Առաք. հատուածը կը ցուցնէ քրիստոնեայ մը դառնալու միջոցը, իսկ Փիլ. Գ. 7-14 կը ցուցնէ Քրիստոսի մէջ աճիլ: Այս հատուածն ալ հաւատացեալները լաւ կ'ընեն եթէ բառ առ բառ զոց սորվին: Մեղաւորին փրկութիւնը խաչակալ

Քրիստոսի մահուան եւ յարութեան հաւատալուն մէջ է: Փրկուած հաւատացեալին կեանքը փառաւորեալ Քրիստոսի մէջ ապրիլ է:

Ով անդարձ հոգի, «հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի ու պիտի փրկուիս»:

Ով փրկուած հաւատացեալ, քու ամէն շահերդ փաստեպելով Քրիստոսը շահէ, Իր մէջ զրանուէ ու զԱնիկա ճանչցիր:

ՀՈԿՏ. 18.—

ՔՍՐՈՉՈՒԱԾ ԵՒ ԳՐՈՒԱԾ ԽՕՍՔԸ

Դաս Գ. Առաք. ԺԷ. 1, 5-11, Ա. Թեա. Բ. 7-12

Մեր դասի նիւթին վրայ կրնանք աւելցնել նաեւ «Ապրուած խօսքը»: Քրիստոսը բերնով վկայողներուն կեանքը անհրաժեշտ է վկայութիւնը պտղաբեր ընելու համար: Լուսեր քարոզիչի մը համար կ'ըսէր թէ «Նա կ'ապրէր այն ինչ որ ուրիշներ կը քարոզէին»: Պողոս առաքեալ Քրիստոսը կը քարոզէր եռանդով, հեղուկեամբ, բարութեամբ, քաջութեամբ, հաւատարմութեամբ եւ անձնազոհութեամբ: Նա կ'ապրէր սրբութեան մէջ (առ Աստուած), արդարութեան մէջ (առ ինքզինքը) եւ անմեղադրելի (առ ուրիշներ): Իր պատգամը սիրով շարուած էր: Աստուծոյ խօսքը ապրելու համար զայն մեր մէջ ընդունելու, անով լեցուելու եւ զայն պահելու ենք: Մեր փրկութեան Առաջնորդը զայն զործածեց Սատանային յաղթելու համար (Մատթ. Գ. 4, 7, 10): Առաքեալն ալ զայն կը զործածէր դիմադրաւելու համար «իշխանութիւնները ու պետութիւնները եւ այս խառն անշխարհին իշխանները» (Եփես. Զ. 12): Մարմնաւոր ոչ մէկ զէնք կրնայ յաղթել այն խառն զօրութեանց որ կ'ուզեն հաւատացեալին դէպի երկինք ճամբորդութիւնը արգիլել (Բ. Կոր. Ժ. 4): Միայն Հոգիին երկապլոր սուրը զործածելով է որ կրնանք թշուաժին փախուստի մատնել եւ անոր գերի տարած հոգիները Քրիստոսի ազատութեանը բերել: Ըլլալ Դերբէի մէջ կռապաշտներու հետ իր մաքանչումին ատեն (Գ. Առաք. ԺԷ. 6-19), ըլլալ Թեոստրիկէի մէջ եւ այլուր հրեաներուն փաստելու համար (ԺԷ. 5), Աթենացի փիլիսոփաներուն հետ վիճելու պահուն (ԺԷ. 15-34), կամ հաճոյասէր Կորնիլացոց մօտ (ԺԸ), առաքեալը կը փաստէր թէ Աւետարանը «Աստուծոյ զօրութիւնն է փրկութեան համար» (Հռով. Ա. 16): Ուրիշ սուրեր կ'աւերեն, Հոգիին սուրը կը փրկէ:

Թեապոնիկէի մէջ եղած հալածանքը ինչպէ՞ս միշտ, սատարեց այդ քաղաքին մէջ «ըստ Մակեդոնիայի եւ Աքայիայի» օրինակ ըլլալիք

եկեղեցւոյ մը հաստատութեան (Ա. Թեա. Ա. 7, Բ. 4-6, 13, 14): Քանի Գ. Առաք. ի մեր սերտողութեան մէջ կը յառաջանանք, աւելի յստակօրէն մեր աչքին կը զարնէ առաքելոց օրերու եկեղեցւոյն եւ քսաներորդ դարու եկեղեցւոյն հակասական վիճակը: Հոն առաքեալները Քրիստոսի անուան համար հալածուելիւ փառք, շնորհք (Փիլ. Ա. 29) եւ ուրախութիւն կը սեպէին, իսկ հոս՝ ամէն միջոց կը գործածենք հալածանքէ, չարչարանքէ խուսափելու, ամէն հանգստութիւն վայելելու եւ յաճախ աշխարհի հետ դաշնակցելով: Ասոր համար արթնութիւնը չգար, վասնզի պատրաստ չենք անոր բերած (անխուսափելի) հալածանքը ընդունելու: Իրաւցնէ «տակաւին արիւն թափելու չափ պատերազմելով հակառակ չկեցանք մեղքին» (Եբր. ԺԲ. 4):

ՀՈԿՏ. 25.—

ՔՐԻՍՏՈՆԵՌԻԹԻՆԸ ԻԲՐ ՍԷՐ

Դաս Գ. Առաք. ԺԸ. 1-4, Ա. Կոր. ԺԳ. 1-13

Թէ ինչո՞ւ Պօղոս առաքեալի սիրոյ վրայ զբրած սաղմոսը իր Կորնթացւոց զրած թուղթերէն մէկուն մէջ կը գտնուի, մարդկային հաշուով զբրական մէկ պատասխան կայ՝ այն ալ Գ. Առաք. ԺԸ. 1-4ի Կորնթոսի մէջ Ակիւղաս եւ Պրիսկիլայի մօտ իր գտած սէրը կարելի է հաշուել: Ասկէ զատ ամէն ինչ աննպաստ է Կորնթացւոց: Անոնք առաքեալին հիմնած եկեղեցիներուն ամենէն աւելի մարմնաւոր գործերով առաքեալը վշտացուցած կ'երեւին: Բայց սէրը, Աստուծոյ սէրը այս կերպ յայտնուեցաւ: «Աստուած իր սէրը զոր մ'եր վրայ ունէր յայտնեց, երբ ամբարիշտ, մեղաւոր, Աստուծոյ թշնամի» էինք մենք (Հռով. Ե. 6-11): Այս կէտին մէջ առաքեալը «Աստուծոյ նմանող» կ'ըլլայ (Եփես. Ե. 1):

Առաքեալը Ա. Կոր. ԺԲ. (հոգեւոր պարզեցնելու) զուխը կը վերջացնէ այս խօսքերով, «Դուք նախանձաւոր եղէք այն շնորհքներուն որոնք լաւագոյն են, եւ ես ալ աւելի ալիքի ճամբայ մը կը ցուցնեմ ձեզի»: Այս լաւագոյնէն ալ աւելի ալիքի նա կը նկարագրէ ԺԳ. զլիսուն մէջ եւ ԺԳ. զուխը կ'սկսի ըսելով, «Սիրոյ ետեւէն գացէք»:

Հաւատացեալը պէտք չէ գոհ եւ հանդարտ ըլլայ, մինչեւ որ ամենէն լեցուն իրականութեամբ սէրը ճանչնայ, ճշմարտապէս զայն ապրի եւ շարունակաբար անոր զօրութեան ներքեւ ըլլայ:

Բայց ի՞նչպէս պիտի ետեւէն երթանք եւ ձեռք ձգենք այս սէրը: Պարտինք նախ զիստակ թէ սէրը իր ճշմարտ նկարագրին մէջ ի՞նչ է:

Սէրը մարդկային յատկութիւն մը չէ՝ հապա

Աստուածային շնորհք մը: Սէրը բան մը չէ որ հաւատացեալը կրնայ ընել կամ սորվիլ, բայց բան մ'է որ Աստուած իր Որդւոյն Հոգիով, Սբ. Հոգիով, հաւատացեալին սրտին մէջ բնակելով անոր մէջ կը ներգործէ: Ինչ որ մարդիկ սովորաբար իրար մէջ սէր կը կոչեն, խոշոր սխալ մըն է: Սէրը միայն ընկերաբանութիւն, բարեկամութիւն եւ մարդկային համակրութիւն չէ: Սէրը միայն սկզբունք մը չէ, բան մը որուն ընտրութիւնը մարդուս ձեռքը ըլլար կամ իր կամքի զօրութեանէն կախում ունենար: Այս բաները միայն զգացական սէր են եւ կամ մասամբ մը սիրոյ պտուղները՝ բայց ոչ ինքնին ճշմարիտ սէրը: Սէրը իր ըզխումին, ստեղծումին, նկարագրին եւ արտայայտութեանը մէջ Աստուածային է: Սիրոյ զօրութիւնը, կամ մղիչ ուժը, այն ինչ սէր կ'ստեղծէ եւ սէրը կ'արծարծէ: Քրիստոսի մեր ներսիդին բնակելուն ներկայութիւնն է:

Ուստի սիրոյ ետեւէն երթալուն միակ միջոցն է Քրիստոսի մէջ կենալ եւ հոգիով քալել (Յովհ. ԺԵ. 4, 9, Հռով. Ե. 5, Դադ. Ե. 16, 22):

Սէրը շնորհքին լեցունութիւնն է, սրբութեան հիմը, Աւետարանին կենսահիւթը, ծառայութեան զլիսաւոր զրգապատճառը, քրիստոնէութեան էութիւնը, Գողգոթայի խաչին բացատրութիւնը, Աստուծոյ բնութիւնն է եւ յաւիտեանականութեան փառքին մէջ ուրախութեան կատարեալ լեցունութիւնը պիտի ըլլայ:

Քրիստոնէութիւնը կ'սկսի ինկած մարդուն համար Աստուծոյ անհուն սիրով, եւ «մենք զԱնիկա կը սիրենք, վասնզի առաջ Անիկա մեզ սիրեց» (Ա. Յովհ. Դ. 19): Աստուծոյ սէրը ուրիշներու կը յայտնուի Աստուծոյ Ժողովուրդին մէջ եւ անոնց միջոցաւ՝ երբ անոնք կը ծառայեն, կ'ապրին, կը կարեկցին եւ կ'օգնեն ուրիշներու: Պէտք է յիշել նաեւ թէ ուրիշներու հանդէպ մեր սէրը անհրաժեշտ փաստն է ցուցունելու համար թէ մենք զԱստուած կը ճանչնանք եւ զԱյն կը սիրենք (Ա. Յովհ. Դ. 20):

Եւ այս սէրը ամենէն գործնական կերպով նկարագրուած է Ա. Կոր. ԺԳ.ի մէջ: Մէկը թեւադրած է որ այս զլիսուն 4-7 համարները սէր բառին տեղ եւ բառը դնելով եւ բայերը առաջին դէմքին վերածելով կարգան, «Ես երկայնամիտ եմ, քաղցր եմ... եւայլն»:


Աստուծոյ խօսքը մեզի կը սորվեցնէ ի մէջ այլոց.—

Սէրը հագուելի՝ Կող. Դ. 14:

Սիրոյ ետեւէն երթալ՝ Ա. Կոր. ԺԳ. 1:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆ ՌԻՒՍԼԻ



«Աստուծոյ սրտին համեմատ եղող այս մարդուն, Աւետարանական եկեղեցւոյ այս սուրբին եւ սրբութեան առաքեալին կենսագրութիւնը վերջացնելէ առաջ անոր նկարագրէն քանի մը զիծեր ամփոփենք: Այս գլ.ը Ուէսլիի գանազան կենսագիրներէն առնուած հատուածներու հաւաքածոյ մը պիտի ըլլայ, մանաւանդ վեր. Մատթէոս Լըլիէփոէն»:

Ճան Ուէսլիի նկարագիրը կարելի է բացատրել միայն իրեն խորունկ աստուածապաշտութեամբը: Նա մեծ բարեկարգիչ մը եղաւ՝ որովհետեւ մեծ քրիստոնեայ մըն էր: Անոր քարոզած քրիստոնէութիւնը փորձառական քրիստոնէութիւնն էր, այն որ մարդու հոգւոյն եւ կեանքին վրայ ներգործելով զայն երջանիկ եւ զօրաւոր կ'ընէ: Ուէսլի իր քարոզած ճշմարտութիւնները նախ ինք կ'ապրէր: Մէթիւ Արնօլտ անոր համար ըսած է թէ «Ուէսլի Աստուածապաշտութեան հանճարը, տաղանդը ունեցաւ»:

Աղօթքը, անձնական, առանձնական աղօթքը, Ուէսլիի կեանքին եւ գործին զաղտնի ուժն էր: Փընշըն կ'ըսէ, «Ինքն իր վրայ ի գործ դրած զօնթրօլին ինչպէս նաեւ իր պաշտօնէութեան հրաշալի զօրութեան զաղտնիքը պէտք է փնտռել առաւօտեան կանուխ ժամուն որ Ուէսլի աղօթքի կը յատկացնէր իր զրասենեակին մէջ: Ուէսլիի աղօթքները կը բացատրեն ԺԸ. զարուարթութիւնը, ինչպէս Լուտերի աղօթքները կը բացատրեն բարեկարգութեան յաջողութիւնը:

Սիրոյ մէջ առատաւանձ փիլ. Ա. 9:

Սիրոյ մէջ հաստատ մնալ՝ Եբր. ԺԳ. 1:

Մէկգմէկ սիրոյ զրգուիլ՝ Եբր. Ժ. 24:

Գործով ու ճշմարտութիւնով սիրել՝ Ա. Յովհ. Գ. 18:

Մէկգմէկ պինդ սիրել՝ Ա. Պետ. Ա. 22:

Հետեւողութեամբ

վ. Ս.

Փնտռեցէք զայն իր ապաշխարութեան յաջորդօրը կամ անկէ 50 տարի յետոյ՝ զայն ամէն առաւօտ ժամը 4ին ոտքի վրայ կը գտնէք եւ առաւօտեան առաջին ժամերը ծունկի վրայ: Այս մէթոտով նա արդէն շատ գործ տեսած կ'ըլլար մինչեւ այն ժամը երբ սովորաբար մարդոց մեծ մասը իրենց անկողիններէն նոր կ'ելլեն, Հետեւեցէք անոր ամէն տեղ, այս շատ բազմազբօղ մարդը որ անդադար հետիւտն կամ ձիով կը ճամբորդէր Աւետարանը քարոզելու, այս մարդը որ 50 տարուայ ընթացքին 40,000 անգամներ քարոզեց՝ զայն կը գտնէք խղճամիտ կարգապահութեամբ առաւօտեան ժամը չորսին աղօթքի վրայ:

Պէտք է յիշել նաեւ թէ Ուէսլի շատ կ'երգէր, եւ ան ալ առտուն իր անկողնէն ելլելու վայրկեանէն սկսեալ: Իր զրպանի մտերիմ օրագրութիւնը (միւս գործի օրագրութեանէն զատ) կը սկսի զրեթէ ամէն օր սա երկու բառերով «երգ, աղօթք»: 1739 Յունուար մէկի էջը 8 անգամ այս «երգ» բառը կը յիշէ: Եւ իր մահուան անկողնին վրայ 88 ամեայ ծերունին իր հոգին կ'աւանդէր երգելով, «I'll praise my Maker while I've breath» (Իմ Արարիչս պիտի փառաբանեմ, քանի ղեռ չունչ ունիմ):

Աստուծոյ եւ մարդոց հանդէպ մեծ սէրը զոր Ուէսլի ունէր, միակ աղբիւրն էր այն անձնուրաց եւ զօհող հոգիին որ նա ամենէն կատարեալ կերպով երեւան բերաւ: Շատ քիչ մարդիկ այնչափ նախաստուած, ամբաստանուած եւ վռնտուած են որքան Ուէսլի: Երկար տարիներ նա տոկաց խաժանին կատարութեան, իշխանութեանց չարակամութեան, եկեղեցական պաշտօնեաներու նախանձոտ ատելութեան, բարեկեցիկ մարդոց պժգանքին եւ ինչ որ իրեն համար ամենէն զժուար կուգար այն ալ շատ մը անկելո՞ծ քրիստոնեաներու հակառակութիւնն էր: Նա ոչ անզգայ էր, ոչ ալ շատ պաղարիւն: Նա գիտցաւ տանջուիլ՝ վասնզի գիտցաւ սիրել: Խոտովութեանց եւ ամբաստանութեանց միջոցին նա չէր վրդովուեր, վասնզի ինքզինքը իր խղճին հետ խաղաղութեան մէջ եւ իր Աստուծոյն հաճութեանը մէջ կը գտնէր:

Անոր քաջութիւնը կը նմանէր այն զինուորին որ կրակը կամ ճակատամարտը կը զիմազբաւէ: Մենք ասոր շատ մը օրինակները տեսնաք իր կեանքի ընթացքին, բայց հոս տեսնէ նկատել տալ թէ այս քաջութիւնը միշտ ընկերացաւ իր մէջ քրիստոնէական այն հոգիին որ կը ներէ նախատինքներուն, կ'օրհնէ զինք անիծողները եւ

աղօթք կ'ընէ անոնց համար որ զինք կը հալածեն:

Ըսինք թէ Ուէսլի շատ զբաղած մարդ մըն էր: Բայց ասիկա անոր համար ոեւէ կերպով «հոգ» ընել չէր նշանակեր: Իր ճամբորդութիւններէն և քարոզներէն զտու 200 հատոր գրքեր գրեց: Հըս կայ թղթակցութիւն մը ունէր եւ մինչեւ իր մահը 70,000ի հասնող Մեթոտական եկեղեցիներու անդամներէն գրեթէ իւրաքանչիւրը իր սրտին վրայ կը կրէր: Բայց նա կ'ըսէ, «10,000 հոգեր իմ հոգիիս վրայ աւելի ծանր չեն ճնշեր, որքան մազի 10,000 թելեր իմ գլխուս վրայ»:

Օր մը մէկը հարցուց անոր, «Եթէ մէկը ձեզի ըսէր թէ այս գիշեր պիտի մեռնիք, ինչպէ՞ս պիտի անցնէիք ձեր ժամանակը մինչեւ ձեր մահուան ժամը»: «Ծիշդ այնպէս ինչպէս արդէն ծրագրած էի անցնել» պատասխանեց Ուէսլի. եւ յետոյ պարզեց այն ծրագիրը զոր արդէն ունէր. կէսօրին տեղ մը ճաշ, կէսօրէն յետոյ ժամադրութիւն մը, յետոյ քարոզութիւն մը, յետոյ ճամբորդութիւն մը, բարեկամի մը մօտ երեկոյեան ճաշ մը, յետոյ նորէն քարոզութիւն մը, եւ վերջացուց ըսելով, «անկէ յետոյ անկողին մտնելով խաղաղօրէն պիտի քնանայի եւ փառքի մէջ պիտի արթննայի»:

Երկու բաներ կային զորոնք Ուէսլի վերջին ծայր խնայողութեամբ կը գործածէր, «իր ժամանակը եւ իր զբաղմունքը»: Անոր համար իր վայրկեանները աւելի թանկագին էին քան որ շատերու համար իրենց ժամերը: Այսու նա երբեք աճապարանքի մէջ չէր: Բարեկամի մը որ օր մը իրեն կ'ըսէր, «Պէտք չունիս աճապարելու», նա պատասխանեց, «Ես ժամանակ չունիմ աճապարանքի մէջ ըլլալու»:

Իսկ դժբաղի համար անոր խնայողութիւնը մի միայն աղքատաց աւելի շատ օգնելու համար էր: Պատուելիութեան ամսականը մեծ բան մը չէր թէ եւ, բայց իր հրատարակութիւնները բաւական մեծ եկամուտ մը կը բերէին, բայց նա իրեն համար ամենաանհրաժեշտ ծախսերը առնելէ յետոյ մնացածը աղքատներուն կը բաշխէր: Որոշ տարի մը 475,000 ֆրանք կը հաշուուի անոր ցրուած դրամը եւ 50 տարուայ ընթացքին 6 միլիոն ֆրանքէն ոչ պակաս դրամ ցրուեց. (միայն իր անձնական եկամուտէն): Օր մը արծաթեայ ամաններու վրայ սուրբ պահանջող պաշտօնեաները իրեն ալ դիմեցին՝ խորհելով որ իրեն նման հռչակաւոր մարդ մը շատ արծաթամաներ ունենալու էր: Ուէսլի պատասխանեց, «Առայժմ ամբողջ ունեցածս կը բաղկանայ 2

արծաթեայ թէյի զգալներէ Պրիսթուի մէջ եւ 2 ալ Լոնտոնի մէջ, եւ ասոնցմէ աւելին ալ զընելու նպատակ չունիմ» որքան ժամանակ որ իմ շուրջս մեծ թիւով մարդիկ ուտելու հաց չունին»: Այսպէս նա աղքատ մեռաւ, ինչպէս փափաքած էր: Փընշըն կ'ըսէ թէ անոր իր ետեւ թողած բաներն էին «Լաւ գրադարան մը, շատ գործածութեամբ հինցած քարոզի զգեստ մը, շատ չարչրկուած համբաւ մը... եւ Մեթոտական եկեղեցին»:

Ուէսլիի նկարագիրը անթերի չէր թէ եւ, բայց կարելի է ըսել թէ անոր թերութիւնները մահաւանդ իր յատկութեանց թերութիւնները եղան: Զսիկէն աւելի կրակոտ եւ գործունեայ ըլլալուն, երբեմն գրգռուած կամ անհամբեր կ'ըլլար, բայց այսպիսի վայրկեաններու գործած սխալները շտկելու համար մեծ խոնարհութիւն ցոյց կուտար: Օր մը իր ճամբորդութեան ընկերոջ Պրէտֆօրտէն ծառայութիւն մը խնդրեց. Պրէտֆօրտ մերժեց եւ Ուէսլի գրգռուած ըսաւ, «Լաւ ուրեմն, կը բաժնուինք»:

Յաջորդ առաւօտ երբ իրարու հանդիպեցան, Ուէսլի հարցուց, «Էհ, ուրեմն կը բաժնուինք»: «Ինչպէս որ կ'ուզէք» ըսաւ Պրէտֆօրտ չոր կերպով:

«Նայինք» ըսաւ Ուէսլի, «չե՞ս ուզեր ինծմէ ներողութիւն խնդրել»:

«Ո՛չ պարոն»:

«Որոշապէս չպիտի խնդրես»:

«Ո՛չ պարոն»:

«Շատ լաւ» գոչեց պատկառելի ծերունին, ուրեմն ես քեզմէ ներողութիւն կը խնդրեմ»:

Պրէտֆօրտ յաղթուեցաւ, արցունքը ցաւքեց աչքերէն եւ ամէն ինչ մոռցուեցաւ:

Ուէսլի փառասէր չէր, բայց զօրաւոր հեղինակութիւն կը գործածէր որպէսզի իր քարոզած ճշմարտութիւնները տարածելու աւելի զիւրութիւններ ունենար: Անոր փառասիրութիւնը առաքելութիւն մըն էր որմէ քրիստոնէութիւնը ամօթ չզղալէ զատ կը պարծի իսկ: Անոր փառասիրութիւնը չէր այն որ կը փնտռէ ինքզինքը գոհացնել պատիւներով եւ հարստութիւնով՝ հապա այն որ հազարաւոր մարդոց սրբտերուն եւ սիրոյն կը հրամայէ եւ իրեն տրուած պատիւներէն ու նոյնիսկ երախտագիտութեան նշաններէն զլուխը չկորսնցնէր: Կալլիէն, ԺԸ, դարու արթնութեան հերոսներուն մասին խօսած ատեն, կ'ըսէ, «Աստուծոյ բոլոր այս մարդիկը, Ուէսլի ուրիշներէն ոչ աւելի, իրենք չէին որ արթնութիւնը ստեղծեցին, հապա անոնք բռնը-

ւեցան եւ առաջնորդուեցան երկինքէն եկած այս շարժումէն: Անոնց միակ արժանիքը հոն է որ «այն երկնային տեսիլքին անհնազանդ չեղան»:

Մեթոտական եկեղեցւոյ պատմութեան մէջ շատ կարեւոր է թէեւ ուսումնասիրել անոր վարչական կազմակերպութիւնը՝ բայց զայս ընելու համար հարկ պիտի ըլլար նախ Անկլիքան եկեղեցւոյ վարչական կազմակերպութիւնը ուսումնասիրել. վասնզի Ճան Ուէսլի մինչեւ վերջը Անկլիքան եկեղեցւոյն մէկ պաշտօնեան մնաց: Մեթոտական եկեղեցիներու զատ կազմակերպութիւնը ինքնաբերաբար, զէպֆերու ստիպման տակ եղաւ, եւ Ուէսլի մահէն մէկ տարի չանցած արդէն ամենախրթին հարցը որուն առջեւ մեթոտականները գտան ինքզինքնին, Անկլիքան եկեղեցիներէն պաշտօնապէս բաժնուելու հարցը եղաւ: Ուէսլի ինքը մասնաւոր տաղանդ ունէր մանաւանդ դարձի եկած հաւատացեալները խումբերու վերածելով կազմակերպելու անոնց հոգեւոր անանումին եւ աճմանը համար: Թերեւս ուրիշ առթիւ մը եթէ Տէրը կամենայ, կը խօսինք աշխարհական քարոզիչներու դրութեանց վրայ, զոր Ուէսլի հաստատեց ու նաեւ իր անոնց տուած 12 կանոններուն վրայ:

Ուրիշ կարեւոր կէտ մը պիտի ըլլար ուսումնասիրել նաեւ Մեթոտական եկեղեցւոյ վարդապետութիւնը, բայց հոս եւս հարկ է ըսել թէ Մեթոտական եկեղեցին հաւատքի զատ հանգանակ չունեցաւ եւ զեռ մինչեւ այսօր չունի: Ան պահեց Անկլիքան եկեղեցւոյ 39 կանոնները, որոնք հաւատարիմ էին Աւետարանին հիմնական վարդապետութեանց: Բայց Մեթոտական եկեղեցին վարդապետական հաստատուն հիմեր ունէր: Եկեղեցի մը, որ վարդապետութիւններ չունի, կը նմանի առանց կմախքի մարմնի մը, թոյլ մտակոյտ մը, որ հազիւ ինքզինքը սողունի պէս գետնին երեսը կը քաշկոտէ: Մեթոտական եկեղեցւոյ վարդապետութիւնը փնտռելու է Ուէսլի քրտնոգնութիւն մէջ: Երեք բառեր ամենալուսկերպով կ'ամփոփեն այս վարդապետութիւնը, «Ապաշխարութիւն, Հաւատք եւ Սրբութիւն»: Սր. Հոգիին մեր ներսիդին տուած վկայութիւնը թէեւ հիմն է մեր փրկութեան վստահութեանը եւ մեր Աստուծոյ զաւակ մը դառնալուն՝ բայց երբեք վերջնական ապահովութիւն չէ յաւիտենական փրկութեան: Ուէսլի նախասահմանական չէր, հապա փրկութիւնը աղատ կամքով ընդունելու ու զայն մինչեւ վերջը աղատ կամքով պահելու եւ փրկուած հոգիին կամ մինչեւ կատարեալ սրբութիւն եւ կամ իշխանով կորսուելուն՝ ազատ

կամքով ընտրութիւնը եւ կարելիութիւնը քարոզող էր: Թէեւ փրկութեան եւ սրբութեան գործը Ս. Հոգին կ'ընէ Տէր Յիսուս Քրիստոսի պատուական արիւնովը: Ազատութիւն եւ սրբութիւն Ուէսլի նշանաբանները եղան ժԸ. դարու արթնութեան մէջ: Ճան Ուէսլի իր վարդապետութիւնը կ'ամփոփէր այն պատուէրին մէջ որ Յիսուս ալ ամփոփեց օրէնքը ու մարգարէները, «Բու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտէդ եւ քու բոլոր անձէդ ու քու բոլոր մտքէդ եւ քու բոլոր զօրութենէդ... եւ քու ընկերդ սիրես քու անձիդ պէս» Մարկ. ԺԲ. 30, 31: Յաւալի է ըսել որ մեր օրերու Մեթոտական եկեղեցիները հակառակ իրենց աշխարհածաւալ մեծութեան, 10 միլիոն անդամներուն եւ 30 միլիոն համակիրներուն, հարիւրաւոր միլիոններու հասնող հսկայ պիւտճէին, միսիոնարական մեծ գործառնութեանց եւն. անարժան ժառանգորդները դարձած են հաւատքի մեծ հերոսին Ուէսլի: Արդիականութիւնը թուեալորած է մեծաւ մասամբ զանոնք, եւ եթէ այսօր նոր Ճան Ուէսլի մը ելլէր այն եկեղեցւոյ ծոցէն, ստիպուած պիտի ըլլար իր ոտքերուն փոշին թոթովել անոնց դէմ ու Մեթոտականոր եկեղեցի մը հաստատել Ս. Գրքին վրայ որ Ճան Ուէսլի ամենասիրելի կեանքի ընկերը եւ առաջնորդը եղաւ, եւ որ նորերը աւելի եւ աւելի մութին մէջ կը թողուն:

Երկու խօսք նաեւ մանաւանդ Ուէսլի վրայ իբր քարոզիչ: Ոմանք կ'ըսեն թէ Ուէսլի ուսումնաւարան մը չեղաւ: Եթէ Աստուածաբանութիւն ըսելով անոնք կը հասկնան մութ, անհասկնալի, խրթին պատճառաբանութիւններ, այո, պէտք է մերժել Ուէսլի Աստուածաբանի տիպոսը. քանզի նա հրաշալիօրէն յստակ կը խօսի: Անոր փափաքն է ամէնքէն հասկցուիլ, եւ եթէ զիտապաշտութեան լեզուաբանութենէ կ'զգուշանայ, պատճառը իր տգիտութիւնը չէ, վասնզի Ուէսլի Օքսֆորտի համալսարանին մէջ բրոֆէսոր անգամ եղաւ, հապա անոր փափաքն է Աւետարանին ճշմարտութիւնները ամենէն պարզ միտքերուն ալ հասկնալի դարձնել: Նա կ'ըսէ, «Ես իմ խօսքս պարզ մարդոց կ'ուղղեմ եւ ամենապարզ կերպով, ուստի կ'զգուշանամ նախապատրաստուած ոճերէ, փրկիստփայական խորամանկ դարձածքներէ, բարդ պատճառաբանութիւններէ եւ որքան որ կարելի է իմ զիտնականութիւնս ցուցարդող ցոյցի լեզուէ, ի բաց առեալ երբ Ս. Գրոց համարի մը բնագիրը յիշել պէտք ըլլայ»:

Հետեւեալ զէպքը յստակ կը ցուցնէ թէ Աստուած ինչպէս Ուէսլի սորվեցուց պարզ քարո-

գել: Երբ դեռ երիտասարդ էր, օր մը նա գիւղացիներէ բաղկացած ունկնդիրներու խումբի մը ներկայութեան ակադեմական շատ քարծր ոճերով քարոզ մը տուաւ: Մարդիկ զայն բերանաբաց մտիկ ըրին թէեւ, բայց բան մը չհասկցան: Յաջորդ անգամին իր ճարտասանութենէն մաս մը կտրատեց: Այս անգամ բերանները աւելի պակաս բաց մտիկ կ'ընէին, բայց քիչ մ'աւելի կը հասկնային: Ուէսլի որոշեց բոլորէն ալ հասկցուիլ եւ լման հասկցուիլ: Խելացի սպասուհի աղջիկ մը կանչեց եւ իր քարոզը անոր կարգաց ըսելով որ զինք կեցնէ ամէն բառի առջեւ որ չէր հասկնար: Աղջիկը այնքան յաճախ ստիպուեցաւ զոչի «կեցէք պարօն», որ Ուէսլի դժուարաւ ինքզինք կը զսպէր բարկանալէ: Բայց նա յարատեւեց, եւ չհասկցուած քարծր բառերը փոխեց անոնց տեղ պարզ բառեր գնելով, եւ յաջողեցաւ վերջապէս լման հասկցուիլ թէ՛ սպասուհի աղջիկէն եւ թէ՛ բոլորէն:

Ուէսլիի քարոզութեանց պարզութեան ամենամեծ գաղտնիքը պէտք է փնտռել նաեւ անոր Ս. Գրքին հետ ունեցած մտերիմ յարաբերութեան եւ անկէ ներշնչման մէջ: Ո՛հ, տուէք ինծի այս Գիրքը, ամէն գնով տուէք ինծի Աստուծոյ գիրքը: Թող անոր տիրանամ. անոր էջերուն մէջ պարփակուած գիտութիւնը ինծի կը բաւէ: Թող ես ըլլամ «միայն մէկ գրքի մարդը»:

Էտմօն տը Փրէստուք կ'ըսէ, «Ուէսլի Աւետարանը նորէն բերաւ այն սառնային բարձրութիւններէն՝ ուր կրօնական քարծր դասու ժարդիկ գըրած էին: Ուէսլի զայն բերաւ զրկեալներուն տըղէտներուն եւ գերիներուն: Նա անգամ մըն ալ իրագործեց սա խօսքը, «Աղքատներուն Աւետարան կը քարոզուի»:

Վերջապէս հետաքրքրական է նաեւ կաթոլիկ արեղայի մը, Հանրի Պրէմօնի վկայութիւնը, «Ուէսլի, ամէն բանէ առաջ՝ ժողովուրդին հոծ բազմութիւններուն առաքեալն է: Իրեն եւ իր քարոզութիւններուն ու երգերուն շնորհիւ միլիոններով սւ միլիոններով աշխատաւորներ եւ գիւղացիներ քրիստոնեայ մնացած են եւ քրիստոնէայ կը մնան: Արդ, ժողովրդային բազմութիւններու հաւատքը այսօր մեզի համար եւս հարցերուն հարցը չէ՝ միթէ:

Վ. Ս.

ՊԱՏԱՆԵԱՅ



ՓՐԿՈՒԹԻՒՆ

ՅԻՍՈՒՍԻ ԱՐԻՒՆՈՎ

Հնդկաստանի հարաւային կողմերը բնակող Անգլիացի պարօն մը, օր մը իր պատիկ աղջկան հետ քրիստոնեայ գիշերօթիկ դպրոց մը կ'այցելէ ու տնօրէնուհին տեսնել կը փափաքի: Անոր շատ մը հարցումներ ընելէ ու տեղեկութիւններ առնելէ, խոհանոցէն մինչեւ ննջարանն ալ պատելէ ետքը դարձեալ զրասենեակը կը վերադառնայ տնօրէնուհիին վերջին խօսք մըն ալ ըսելու:

— Ձեր պատիկը զիս ամէն կերպով գոհ կը թողու, այս պատճառաւ կ'ուզեմ աղջիկս ձեզի յանձնել: միայն մէկ պայմանաւ որ՝ զգուշանաք անոր կրօնական բաներ սորվեցնելէ: Լսեցի որ դուք այդ հին դադափարները կը քարոզէք եղբր ըսելով թէ պէտք է Յիսուս Քրիստոսի արիւնին հաւատալով փրկուիլ: Բնաւ չեմ ուզեր որ աղջկանս ուղեղը լեցնէք այս բաներով, եթէ կը խօստանաք, այն ատեն ձեզի կը յանձնեմ զայն:

— Կը ցաւիմ, պարօն, բայց ինչ որ ինծմէ կը պահանջէք, բոլորովին անկարելի է: Հոս Սուրբ Գիրքի ուսուցումը մասնաւորներու համար չէ այլ մեր ամբողջ դաստիարակութեան կորիզը կը կազմէ: Մեր բարձրագոյն նպատակը մեզի յանձնուած այս պատիկ հոգիներուն ամէնն ալ Յիսուս Քրիստոսի բերել է, քու պատիկդ բացառութիւն մը չենք կրնար ընել: Արդ, եթէ այս պայմաններով զայն մեզի կը յանձնէք, զինքը շատ ուրախութեամբ կ'ընդունինք մեր ընտանիքին մէջ:

Պարօնը շփոթած՝ վերջը պատասխանելու պայմանով ձգեց ու գնաց: Իրենց դաւառին մէջ այսքան լաւ ուրիշ դպրոց մը չգտնուելուն համար արդ ու կին որոշեցին կրօնական խնդիրին ալ համաձայնիլ, խորհելով թէ իրենց աղջիկը տակաւին պատիկ ըլլալով՝ դպրոցէն ընդունած ազգեցութիւնով շատ չպիտի վտանգուէր: Եւ երբ տուն ալ վերադառնար իրենք պիտի կրնային շուտով ազատել զայն հին դադափարներէն:

Երբ դպրոցը բացուեցաւ, պատիկ Նանսի հոն տարուեցաւ: Շուտով ինքզինքը տաք ընտանեկան մթնոլորտի մը մէջ գտաւ, մանաւանդ կենդանի Աստուծոյն վրայ եղած գիտութիւնը որ իրեն համար բոլորովին նոր էր, իր հոգին ու միտքը զրաւեց:



Օր մը տնօրէնուհին
զայն առանձին գտաւ նըն-
ջարանին մէջ, իր մահճա-
կալին առջեւ ծնրադիր եւ
սաստիկ հեկեկալով: Իր
վշտին պատճառը հարցնե-
լով հասկեցաւ որ Նանսի
յուզուած էր մեղքի խո-
րունկ համոզումով մը եւ
ամէն գնով խաղաղութիւն
գտնել կ'ուզէր:


Շատ պարզ կերպով տը-
նօրէնուհին անոր ցուցուց
փրկութեան ճամբան թէ
միայն Յիսուսի քաւարար
արեանը հաւատալով կըր-
նար փրկուիլ, քանզի Ան
իբր Աստուծոյ Գառը մեր
մեղքերուն համար զոհուած
յարութիւն առած էր, եւ ե-
կթէ ինք ալ հաւատար ու եթէ սիրտը Անոր
յանձնէր, իր փրկութիւնը կատարուած պիտի ըլ-
լար Յիսուսի վրայ: Միասին ծնրադրեցին ու ա-
զօթեցին: Միեւնի պատիկը շուտով հասկեցաւ թէ
ներումը ու խաղաղութիւնը միայն Յիսուսով էր:
Ալ իրեն համար խաւարէ վերջ լոյս ու արցունքէ
վերջ ժպիտ էր: Այս իր մեծ ուրախութիւնը Տէ-
րոջը շնորհքով ու իր տնօրէնուհին խորհուրդովը
ուղեց իր ծնողացը գրեւ ու հաղորդել իր ապաշ-
խարութեան լուրը, որուն փոխարէն յորդահոս
խաղաղութիւն մը ստացած էր վերէն:

Քանի մը օր վերջ իր հօրմէն նամակ մը
ստացաւ որ զինքը ետ տուն կը կանչէր: Տնօրէ-
նուհին դէմ չկեցաւ հօրը հրամանին ալ եւ
ռանգուն ազօթքներով ու խրատականներով զըր-
կեց զայն: Տուն հասնելուն պէս հայրը անոր նոր
կրօնքին վրայ հարցութիւններ քննելէ վերջ սկսաւ
կրօնքը իր կերպովը բացատրել ու սորվեցնել
անոր: Շաբաթ մը այսպէս շարունակելէ վերջ,
արտօնեց որ զպրոց վերադառնայ, խստիւ պատ-
ուիրելով որ ալ չհաւատայ այդ սնտոյի խօսքե-
րուն, եթէ ոչ ստիպուած պիտի ըլլար բոլորովին
զրկել զինք զպրոցէն: Երբ իր սիրելի զպրոցը
հասաւ, Նանսի ինքզինքը տնօրէնուհին գիրկը
նետեց: Երբ տնօրէնուհին Նանսիի հարցուց թէ
դուն հօրդ ըսածներուն հաւատացի՞ր, պիտի ու-
րանա՞ս Փրկիչդ: Պատիկ աղջիկը աչքերը փայ-
լեցնելով պատասխանեց, «Ո՛չ, օրիորդ, իմ Փըր-

ԵՐԳ ՄԵԾԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԵՒ ՊԶՏԻԿՆԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ

ՄԻՇՏ ՅԱՂԹԱԿԱՆ

Թարգ. Ֆրանս. Յ. Ն. Ղ.



Միշտ յաղթական, այս է մեր նշանաբան,
Միշտ յաղթական, թէ մեռնինք տեղն ունայն,
Ձի յաղթութիւն կատարուի հաւատաւ,
Շնորհ Փրկչին, որ ծախու մեզ առաւ:

Մինչ Գողգոթա՝ հետեւինք մեր Փրկչին,
Միշտ պահելով մահն աչաց մեր առջին:
Թէ Անոր պէս աշխարհէ հալածուինք,
Հետն յաղթական պիտ' մտնենք մենք երկինք:

Ո՛հ, համբերենք աշխարհի ցաւերուն,
Դաւանելու Յիսուսի մեծ անուն:
Ձի Ան է միշտ հիմն անշարժ մեր յոյսի.
Այս յոյսն երբեք չպիտի ամաչի:

Հաւատա՛նք եղբարք զօրութեանց աննման,
Որ Յիսուսի խաչէն մեզ կը ցոլան:
Պահենք զըրահն հաւատքի անսասան:
Եւ յաղթենք միշտ ուժովն իր սուրբ արեան:

Կիչս ինծի համար այնքան թանկագին է որ ան-
կարելի է զԱյն ուրանալ. ընդհակառակը հիմա
աւելի կը սիրեմ զԱյն: Նանսի իրապէս հաստատ
կեցաւ իր հաւատքին վրայ, ու հօրը մարդկային
պատճառաբանութիւններն ու ալիքեերը անկէ
վերջ միշտ կը փշրուէին այն հաւատոյ հա-
տատուն ժայռին առջեւ որուն վրայ շինուած էր
Նանսիի հոգեւոր տունը:

ՀԱՅ ԱՌԵՏ. ԿԻՐԱԿԵՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարաժամիչի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՄԵՅԻԼ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Յ. 30 կիր. դաս մեծերու 2 r. Philippe de Giraid
15 30ին աղօթածողով, » »

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, »
Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէնժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիվ, Սէն ժէրոմ, Միեր, Ալթ, Պուլ-

վար Օոո մասնաւոր բնակարաններու մէջ:

Շարաժամիչի ժողովներ

Բ.շբ. ժամը 2ին Սէնժուլիէն, Անտուան,

Դ.շբ. ժամը 2ին Սէն ժիւլիէն եւ Լէզ Օլիվ

Դ.շբ. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե.շբ. ժամը 20ին Սէն ժէրոմ

Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն Լուի.—Քարոզիչ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Armen. Bd. Escalon, St.Loup

Կիր. ժամը 8 30ին մանկանց կիր. դաս:

10. 30ին Ս. գրական ուսումնա,

15 30 ին քարոզածողով:

Սէնժուլիէն ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով:

ԼԱ ՍԻՅԱԼ.—Քարոզիչ՝ Պատ. Ս. Պագգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Վեր. Ա. Փափագեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն Փիէր.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆՇԵԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.—Հովիւ Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան
55 Ave. Jean Jaurès, Bourg les Valence

(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ' Վեր. Ժ. Պարսումեան,

18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

ՍԷՆՔԻԹԻԷ—Քարոզիչ Պատ. Ի. Արրահամեան

60 Rue Richelandière

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տի. Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՋ—Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,

10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 10 30ին քարոզածողով

11 Rue Jean Bert Ա յարկ Met. Rennes

Ամսոյն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Ք. Ը. քա-

նախօռնին: Ամսոյն Գ. կիր. ժ. 16ին Օ. Ք. Ը.

37 Rue Tournafort Paris 5 Metro Mouhe

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux

ԱԼՖՕՐՎԻԼ.—Քարոզիչ՝ Պր. Մ. Վէքիլեան

22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

Կիր. ժամը 10ին պաշտամունք

Երկու կիր. անգամ մը 7.30ին երիտ. խառն ժողով

Rue des Brochets, Alfortville

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ 8 տեսակ
թերթիկներ հրատարակուած են մեր օժանդակութեամբ
Լոնտօնի Script. Gift Missionի կողմէ, որոնց նիւ-
թերը հետեւեալներն են.—

Հաւատք եւ գործ

Կենդանի ջուրը

Զինուորի մը կեանքէն

Յիշատակելի գիշեր մը

Կարօտութեան մէջ Բարեկամ մը

Եկուր, սորվէ, հետեւէ,

Հօտին համար բնակարան

Փրկիչը օթեւան կը գտնէ

Այս թերթիկները չորսական էջ են, որոնց առա-
ջին էջը ներկայանալի պատկերով մը զարդարուած
է, այնպէս որ թէ ցրուողներ եւ թէ ընդունողներ
կ'ուրախանան ընդունելով զանոնք, իրենց ձեռքերուն
մէջ:

Անոնք որ մեծ քանակութեամբ ապսպրել կ'ուզեն
բաժնելու համար, թող հաճին գրել ուղղակի Լոնտօն,
լոկ յիշելով թէ մեր թելադրութեամբ ապսպրած են:
Հասցէն հետեւեալն է.—

Scripture Gift Mission

Eccleston Hall

Eccleston Street

Victoria, London S. W. I.

(England)